

# ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ



## ՄԱՆԿԱՎԱՐԺ ԱՐԱՄ ՏՈՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԳՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Երկարամյա մանկավարժ և լրագրող Արամ Տոնյանի հուշերը գրող, հրապարակախոս Վրթանես Փափագյանի (1864-1920)<sup>1</sup> մասին գրվել են 1946 թ. (37 մեքենագիր էջ ծավալով):

Հուշերի հեղինակը՝ Արամ Դանիելի Տոնյանը, ծնվել է 20.08.1886 թ. Գանձակի նահանգի Նուխի քաղաքում, մահացել է Երևանում 1963 թվականին: Անցյալ դարի սկզբին հայ մամուլի ամենաեռանդուն ու աշխույժ թղթակիցներից է եղել: Անցորդ, Աշղ Տոնի, Վիտայի և այլ ծածկանուններով հոդվածներ է տպագրել մի քանի տասնյակ պարբերականներում՝ «Զանգ» (Բաքու), «Հորիզոն» (Թիֆլիս), «Մշակ» (Թիֆլիս),... «Խորհրդային Հայաստան» (Երևան) ևն:

Բազմաթիվ ակնարկություններից երևում է, որ սա հեղինակի ավելի լայնածավալ ու ընդգրկուն օրագրության մի հատվածն է միայն, որով փորձում է հանիրավի ստվերում մնացած, պատշաճ գնահատականի չարժանացած տոհմիկ մտավորականի, գրողի դիմապատկերի որոշ մանրամասներ, գործունեության որոշ անհայտ էջեր, նրբերանգներ բացահայտել ու փոխանցել ընթերցողին: Վրթ. Փափագյանի գրական ժառանգության ուսումնասիրողներից Ա. Օհանյանը միանգամայն դիպուկ է նկատել. «Մի հայացք նետելով Վ. Փափագյանի կյանքի պատմության վրա, հեշտ է համոզվել, որ այն իր մեջ խտացնում է ընդհանրապես հայ գրողի տիպական ճակատագիրը. ճիշտ է՝ ծայրահեղացված արտահայտությունները՝: Ի դեպ, և՛ ուսումնասիրողները, և՛ ժամանակակիցները զարմանքով հայտնում են, որ մի քանի անգամ առաջադրվել է Փափագյանի տարեդարձը պատշաճ կերպով նշելու հարցը, բայց միանգամայն անորոշ ու անհասկանալի պատճառներով այդպես էլ չի իրականացվել, այն դեպքում, երբ շատ գրողների արժանին մատուցելու համար կամք ու միջոցներ գտնվել են...»

Հավանաբար, 20-րդ հարյուրամյակի սկզբի փոթորկոտ իրադարձությունների նկատմամբ Վրթանես Փափագյանի ունեցած հստակ դիրքորոշումն է եղել հիմնական պատճառներից մեկը, որ խորհրդային տարիներին սառն ու զուսպ է եղել նրա անձի ու գործի նկատմամբ վերաբերմունքը: Գրականագետներ Ռուզան Նանումյանը<sup>2</sup> եւ Աշոտ Օհանյանը<sup>3</sup> գրողի կենսագրության անբակտելի էջ են համարում կուսակցական գործունեությունը: Սակայն, ներկայացվող հուշերի հեղինակը պնդում է, որ Փափագյանը ամենևին էլ տարված չէր քաղաքական գործունեությամբ: Փափագյանն անգամ ֆիզիկապես<sup>4</sup> այդ հնարավորությունը պետք է,

<sup>1</sup> Ամենուրեք իբրև ծննդյան թիվ նշված է 1864, մինչդեռ տապանագիրն ասում է՝ «Վրթանես Փափագյան. 1866-1920»:

<sup>2</sup> Վրթ. Փափագյան, Երկեր, Եր., 1987, էջ 3:

<sup>3</sup> Տե՛ս Ռ. Նանումյան, Վրթ. Փափագյան, Եր., 1956:

<sup>4</sup> Ա. Օհանյան, Վրթ. Փափագյան, Եր., 1976:

<sup>5</sup> Մանկուց նա թույլ առողջություն ուներ, այն աստիճան, որ Գևորգյան ճեմարանում մեկ տարի սովորելուց հետո նրան ընտանիք են ճանապարհում ու անվան դիմաց գրում են. «մահացել է»: Հավանաբար նման ելքը անխուսափելի են համարել. տե՛ս Ա. Օհանյանի վերոնշյալ աշխատությունը, էջ 45:

որ չունենար... Պարզապես, ըստ Ա. Տոնյանի, քաղաքական արմատական փոփոխությունների փոթորկահույզ շրջանում գրողն իրեն սոցիալ-հեղափոխական էր հայտարարել, թեև գործուն ոչ մի քայլի չէր դիմում:

Հուշապատումը հետաքրքիր պատմագիտական և ազգագրական նյութ է տալիս անցյալ դարի սկզբին Ադվանքում բնակվող հայերի կենցաղի, առօրյայի, կրթության գործի հրաշալի կազմակերպման փորձի ու ծաղկուն վիճակի մասին:

Եվ, վերջապես, ջարդի ոչ մի տեսարան չնկարագրելով, հեղինակը, այնուամենայնիվ, շատ կարևոր տեղեկություններ է հաղորդում այդ տարիների իրարանցումի ու թոհուրոհի պայմաններում՝ ազերի թուրքերի կազմակերպած նախճիրի մասին: Հնարավոր է՝ նա ինչ-որ չափով դրանք ներկայացրել է ամբողջական հուշապատումի մեջ: Ադվանքի հայերին բնաջնջելու թրքական փորձերը լուսաբանվում են բազմաթիվ վավերագրերում, որ, դժբախտաբար, ըստ պատշաճի չեն օգտագործվում<sup>6</sup>:

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ 1920 թ. մարտին Վրթ. Փափազյանը\* նամակներով դիմել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս.Տ. Գևորգ Ե-ին, ՀՀ պառլամենտին, հանրային կրթության և արվեստի նախարարին՝ խնդրելով «Տոնացույցի» մեջ ներառել ապրիլ 11-ը (նոր տոմարով՝ 24) իբրև հայ նահատակված մտավորականների հիշատակի օր<sup>7</sup>: Նրա առաջարկությունն ընդունվեց և կատարվում է մինչև օրս: Ծիշտ է՝ խորհրդային տարիներին արգելվեց, և արգելքը վերացավ 1965-ից հետո միայն: «Ապրիլյան օրերը սզո օրեր պիտի հռչակվեն, ...սգահանդեսներ պիտի կարգադրվեն, ուր պիտի վեր հանվեն կորսված և թուրքական սրին գոհ գնացած մեր փայլուն դեմքերը, մեր լավագույն մտավոր ուժերը, և նոր սերունդը պիտի սովորի ծանոթանալ իր ազատության մեծ գոհերի կյանքի ու կրած տառապանքների հետ, ուր երիտասարդ Հայաստանը պիտի ուսանի գնահատել նրանց, պատկանել նրանց հսկա գործունեությունից և մահվանից և սիրել նրանց հիշատակը», -կարդում ենք Փափազյանի 1920 թ. ապրիլ 3-ի գրության մեջ՝ ուղղված կրթության նախարարին<sup>8</sup>: Գրողի խոսքերն այսօր ևս արդիական են հնչում:

Ավելացնենք, որ Ա. Տոնյանի հուշապատումի մեջ կան նաև փոքր անճշտություններ, որոշ հատուկ անուններ թողել ենք հեղինակի գրության ձևով, չի հաջողվել ճշտել ոմանց ինքնությունը:

Ա. Տոնյանի հուշագրությունը կարևոր է այնքանով, որ լուսաբանում է դասական գրողի կենսագրության անհայտ էջերից մեկը:

**Ա. Ա. ԽՈՒԳԱՎԵՐԳՅԱՆ  
Գ. Ա. ՄԱԳՈՅԱՆ**

<sup>6</sup> Տե՛ս, օրինակ, «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության», գիրք Ե, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը առաջին հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), կազմեց Ս. Բեհբուդյանը, Եր., 1999, «Բագրատ եպիսկոպոսի տեղեկագրությունը Շամախիի, Բաքվի և հարակից բնակավայրերի հայերի ու մսլականների նկատմամբ թուրքերի և ադրբեջանցիների գործած վայրագությունների մասին», էջ 86-89, ինչպես՝ 92, 98-100, 128, 201-202 էջերը:

\* Նա 1915 թ. ապրիլին Կոստանդնուպոլսում պարզապես դիպվածով է փրկվել թուրքի յաթաղանից:

<sup>7</sup> Տե՛ս «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», գիրք Ե, էջ 360-362, 365, նաև՝ Կաթողիկոսական դիվանի շրջաբերականը 1920 թ. ապրիլի 11-ին բոլոր եկեղեցիներում նահատակների հիշատակին հոգեհանգիստ կատարելու մասին (էջ 363-364):

<sup>8</sup> Անդ, էջ 362-365:

## ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆԸ ՆՈՒԽՈՒՄ ՄԵՐ ՏԱՆ ԲԱՐԵԿԱՍԸ

1914 թվականը, և առհասարակ, Արմենի<sup>1</sup> ծնվելուց հետո մեր ընտանեկան կյանքի ծաղկումը վեր է որևէ նկարագրությունից:

Ի՞նչ ասել է կարիք, ի՞նչ բան է եղել վախը, դժբախտությունը, հեռու են եղել մեր ընտանիքից:

Չլինե՞ր Հրանտիս<sup>2</sup> մահը, չգիտե՞մ ի՞նչ անուն կարելի էր տալ մեր ընտանեկան հաջողություններին:

Եվ երբ ուզում եմ վեր հանել այդ հաջողությունները, մոռանում եմ ամեն ինչ... Չէ՞ որ շատ երկար է այդ հաջողությունների շղթան:

\* \* \*

1914-15 ուստարում ես հիմնականում Նուխու Հայոց ծխական դպրոցի ոգին էի, նրա տեսչի պաշտոնակատարը, հոգաբարձության քարտուղարը, դպրոցի ամենամոտ մարդը:

Բացի այդ, ես այդ թվականում Նուխու տղայոց Գ-իմնագիայի և պետական տարրական դպրոցի հայոց լեզվի դասատու էի և մի շարք հասարակական աշխատանքների ակտիվ գործիչը:

Ես այնքան երես առա, որ ուզուրպացիայի ենթարկելով հոգաբարձությանը, դիմեցի մի քայլի, որը շատ մեծ ռիսկ էր այն ժամանակներում:

Ես ուղղակի չէի հասցնում աշխատանքները: Հեշտ բան չէր պատասխանատու աշխատանք ունենալ 3 դպրոցներում և միևնույն ժամանակ ետ չմնալ հասարակական աշխատանքներից:

Եվ ահա սեպտեմբերի վերջում դիմեցի մի խիզախ քայլի:

Այդ քայլը, թերևս այժմ դիտվի մի չնչին բան, սակայն, այն ժամանակ հնարավոր չէր, որ մի ուսուցիչ, իր նախաձեռնությամբ և ռիսկով կատարեր մի գործ, որը չէր կարողանում լուծել մի մարմին, ինչպես հոգաբարձությունն էր, այն էլ Գերասիմ Գևորգյանի գլխավորած հոգաբարձությունը:

\* \* \*

Ինչպես պատմեցի նախորդ գլուխներում<sup>3</sup>, հոգաբարձությունը որոշել էր 1914-15 ուստարում հրավիրել համալսարանական տեսուչ, որը լինե՞ր անվանի, փորձված: Սակայն, այդպիսի տեսուչ չգտան և ժամանակավորապես ինձ նշանակեցին տեսչի պաշտոնակատար: Մինչ այս, ես փորձեցի անցկացնել Վրթանես Փափագյանին և նրան Կ.Պոլսից հրավիրել: Սակայն, Գ. Գևորգյանը լսել անգամ չէր ուզում Փափագյանի անունը: Ես էլ ենթարկվելով հոգաբարձության որոշմանը, անցա գործի, այսինքն, սկսեցի կատարել տեսչական աշխատանքները:

Օրերից մի օր (սեպտեմբերի վերջում), առավոտյան, մինչ զանգը տալը, ես Մկրտիչ Թումանյանի սենյակում էի, երբ պոստի ցրիչը բերեց «Հորիզոն» թերթը: Եվ այդտեղ վերջին էջում կարդացի. «Գրող Վրթ. Փափագյանը Կոստանդնուպոլսից վերադարձել է Ռոստով Դոնի վրա և պաշտոն է փնտրում հայկական դպրոցներում: Հասցե...»:

\* \* \*

Կարդալով այս հայտարարությունը, որոշեցի ինքնագլուխ հեռագրել և հրավիրել նրան Նուխի: Սակայն, ինչպես արդարացնել իմ քայլը, ո՞վ կպաշտպանի ինձ Գ. Գևորգյանից: Չէ՞ որ նա Վ. Փափագյանի անունը լսել չէր ուզում: Չէ՞ որ տեսուչ, ուսուցիչ կարող է ընտրել միայն հոգաբարձությունը: Չէ՞ որ նա ընտրել և նշանակել էր ինձ տեսչի պաշտոնակատար:

Բայց երբ պատկերացնում էի, որ Նուխու ծխական դպրոցը կունենա հեղինակավոր մարդ, անվանի գրող և մանկավարժ ղեկավար՝ գժվում էի:

Լինե՞ր մի ուրիշը, կմտածե՞ր այլ կերպ: Չէ՞ ոչ ուսումնական տարուց մի ամիսն արդեն անցել էր: Չէ՞ որ ինձնից գոհ էին բոլորը՝ հոգաբարձությունը, ծնողները, կոլեգաներս, բոլորը:

Սակայն, խելքս էր մտել, որ մենք արժանի ենք Փափագյանի պես ղեկավարի:

Պետք է խոստովանել, որ ուսուցչական խմբի զգալի մասը ևս կողմնակից չէր Փափագյանին: Նրան կողմնակից չէր նաև Նուխու Հոգևոր կառավարությունը՝ հանձին Եղիշե վարդապետ Ահարոնյանի:

Ուրեմն, ո՞ւմ հույսով պետք է դիմեի այդ քայլին:

Այս մտքերի մեջ խճճված պարապեցի 2 դաս և քայլերս ուղղեցի դեպի փոստատուն, որը գտնվում էր դպրոցի դիմացը: Վերցրեցի բլանկը և այսպես խմբագրեցի հեռագիրը. «Ռոստով, Վրթանես Փափագյանին. Հրավիրում ենք դպրոցի տեսուչ: Տարեկան մի հազար երկու հարյուր ռուբլի ռոճիկով: Աճապարեցեք: Հոգաբարձություն»:

Հեռագիրը հանձնեցի, անդորրագիրը վերցրի, կանչեցի կառքը և պատվիրեցի քշել Առևտրային բանկի շենքը, որի դիրեկտորն էր հոգաբարձության նախագահը: Մի քանի րոպեից հետո ես Գ. Գևորգյանի առանձնասենյակում էի: Նա չափազանց տրամադրված ընդունեց ինձ, ժպտաց, հարցրեց դպրոցից, աշխատանքից, անգամ իմ առողջությունից:

Իսկ ես հագիվ պատասխանում էի հարցերին և չգիտեի ո՞նց սկսեմ, որպեսզի կարողանամ տանել նրա ցասումը, բարկությունը:

Ես զգում էի, որ նա պետք է ռումբի պես պայթի, գոռա, գրասեղանի թանաքամանի պրիբորը նետի գլխիս, անարգանքի սյունիին գամի ինձ, քանի որ կատարել եմ մի չտեսնված հանցանք, այն էլ իր կամքին հակառակ մի գործողություն...

Վերջապես, թուրս կուլ տալով, կարմրատակած ու ժպտադեմ սկսեցի կարկամել ու ասել մի երկար ճառ:

«Պարոն Գևորգյան, կարող եք ինձ զանակոծել, կտոր-կտոր անել, ես դեմ եմ գնացել ոչ միայն Ձեզ, այլև հոգաբարձությանը, հոգևոր իշխանությանը, իմ ընկերներին: Ես կատարել եմ մի հանցանք, որը անշուշտ քավելու եմ նրանով, որ մեծ արդյունք և օգուտ եմ տալու մեր սիրած դպրոցին, որը կերևա, երբ անցնի մի կամ մի քանի տարի: Ես ոչինչ չեմ խնայել, որպեսզի մեր դպրոցական աշխատանքները փայլեն, բայց որպեսզի ավելի փայլի, դրա համար ես Ձեր անունից հեռագիր եմ տվել Ռոստով՝ Վրթանես Փափագյանին և հրավիրել եմ տեսուչ: Ահա և անդորրագիրը: Գիտեմ, որ Դուք դեմ եք, գիտեմ, որ ես իրավասու չեի այդ անելու, սակայն, փաստը կատարված է արդեն, սխալս, հանցանքս ուղղել անհնարին է: Այժմ ես եկել եմ Ձեզ մոտ իմ պատիժը կրելու: Ես արժանի եմ Ձեր ցասմանը, Ձեր արձակած պատժին»:

Ճառս ավարտելուց հետո ես ավելի քան խորաթափանց նայեցի նրա խելոք աչքերին և տեսա բոցկլտող մի փայլ, որը հանգավ նրա մեղմ և զարմանքս շարժող բիբերի լայն բացվածքի վրա:

-Գուք կատարել եք ավելի՛ քան մեծ հանցանք: Ո՞վ է Ձեզ իրավունք տվել տեսուչ հրավիրել և այն էլ մի մարդու, որին չենք ցանկացել: Սակայն, հանցանքը մի կողմը, փաստն է կարևոր: Ի՞նչ կարելի է անել այժմ: Պետք է հաշտվել կատարվածի հետ: Ձեզ այլ պատասխան չունեն: Մնում է՝ ինձ հրաժարվել հոգաբարձությունից կամ Ձեր կատարածն ամբողջապես վերցնել ինձ վրա:

Աչքերիս չհավատացի, երբ նա ավելի քան քաղաքավարի կերպով ինձ մի շարք հանձնարարություններ տվեց, զգուշացրեց, որ միշտ ինքը դեմ կմնա Փափազյանին, որ ինքը միայն ինձ է ճանաչելու հետագայում ևս...

\* \* \*

Եվ երբ դուրս եկա փողոց, նոր զգացի, որ ցերեկ է, նոր զգացի, որ ես ուզուրպատոր եմ, որ ես ներված եմ, այն էլ մեծ հոգատարությամբ ներված...

Քայլերս ուղղեցի դպրոց: Անցա աշխատանքիս հերթական կատարմանը: Աչքիս առաջ շարունակ ժապավենի պես անցնում էր «Հորիզոնի» հայտարարությունը, պոստատունը, հեռագիրը, բանկի շենքը, Գ. Գևորգյանի անսպասելի ընդունելությունը, իմ ներքին ուրախությունը, հաջողության հասնող իմ ձեռնարկումը...

\* \* \*

Անցավ 7-8 օր:

«Ֆորեր» հյուրանոցի կոմենդանտը իրիկնաժամին ծեծեց դուռս և հանձնեց մի ծրար.

«Մեծարգո պ. Տոնյան. ես իջել եմ «Ֆորեր» հյուրանոցում: Շատ կխնդրեի Ձեզ անցնել մոտս: Հարգանքներով՝ Վ. Փափազյան»:

Ես չզարմացա, որ նա ինձ է խնդրում և ոչ թե մի ուրիշին: Ինչո՞ւ: Պարզ է: Նախ՝ նրան հայտնի էր, որ մի քանի տարի առաջ Հակոբ Խանլարյանը՝ նամակով խնդրել էր ինձ առաջադրել և պաշտպանել Վ. Փ.-ի թեկնածությունը:

Այդ թվականներում Վրթ. Փափազյանը Շուշու թեմականում գրականության դասատու էր (1911-12 և 1912-13 ուստարիներում), իսկ Հ. Խանլարյանը երիտասարդ բանաստեղծ էր Շուշիում: Խանլարյանը նամակ գրելով ինձ՝ Փափազյանի համար, ստացել էր ինձնից պատասխան, բացի դրանից, ես լինելով ակտիվ թղթակից, ընթերցող հասարակությունը ամենուրեք գիտեր, որ Նուխում աշխատում է մեկը՝ Արամ Տոնյանը, որն ուսուցիչ է, աշխատում է այդ քաղաքներում տարիներից վեր և ունի որոշ համարում: Ուստի, ամեն տեղից ես նամակներ էի ստանում, ամեն տեղից ինձ մոտ հյուրեր, տուրիստներ էին կանգ առնում: Ուստի՝ զարմանալի չէր, որ Վ. Փափազյանն ինձ էր խնդրել իր մոտ:

\* \* \*

Ուրախությանս չափ չկար:

Ուրեմն՝ նպատակիս հասա:

Կունենանք կրթված, պատրաստված, ազդեցիկ և հեղինակավոր տե-

սուչ: Ուրախությունս փոխվում էր հուզմունքի, երբ երևակայում էի ինձ կողք-կողքի մեր անվանի գրողի հետ: Չէ՞ որ Վրթանես Փափազյանը շարքային գրող չէր, այլ նա կանգնած էր առաջնակարգ մեր գրողների շարքերում: Չէ՞ որ նա պատկանում էր ժողովրդադեմոկրատական գրական հոսանքին: Չէ՞ որ նա անհայտ մանկավարժ չէր: Սիրտս ծլունկ էր լինում, երբ երևակայում էի, որ այդ մեծ գրողի Նուխում լինելու պատճառը՝ ե՛ս եմ եղել:

Եվ ճանապարհին քիչ էր մնում պոռայի բերանովս մեկ.

-Նուխի՛, ցնծա՛, քո մեջ է եկել մեր մեծ գրողը, անվանի մանկավարժը:

-Նուխվա հա՛յ ժողովուրդ, ցնծա, քանի որ նա ոչ թե այցի, այլ քո մանուկների դաստիարակման մեծ գործն է ղեկավարելու:

\* \* \*

Երբ ճանապարհին ինձ հաշիվ էի տալիս, թե որն է իմ «հանցանքը», «սխալը»՝ չէի գտնում:

-Ոչ մի հանցանք ու սխալ,- գրեթե բղավեցի «Ֆորերի» շեմքում:

Ովքե՞ր են եղել մեր դպրոցի տեսուչները 1890-ական թվականներից ի վեր:

-Գալուստ Թումանյան, Աստվածատուր Ոսկանյան, Եղիշե Տեր-Պողոսյան, Սարգիս Խանոյան, Հովհաննես Բալասանյան, Սարգիս Տեր-Անանյան՝ և Վրթանես Փափազյան: Սրանցից ո՞վ է բարձր Փափազյանից:

-Ո՛չ ոք:

Ուստի՛ ես ավելի մեծ իրավունքով ծեծեցի հյուրանոցի դուռը և մտա մեծանուն գրող, իմ հայրենի, իմ հրավիրած տեսչի մոտ:

\* \* \*

Կարծեք տասնյակ տարիների ծանոթներ լինեինք, երբ հանդիպեցինք իրար:

Երբ տեսա նրա վիթխարի, լիքը մարմինը, նրա կիրթ ու գրողին հասուն կզդեցիկ դեմքը, երբ խորը կերպով դիտեցի նրա շարժումները, դեմքի, ճակատի կնճիռներից առաջացած ակոսները, հայկական քիթը, հնչեղ ձայնը, ինտոնացիան, խոսքի մեջ ոչ մի դժվարություն չզգալու ունակությունը, ես աշխարհից դուրս եկա:

-Ի՞նչ տպավորություն կթողնեմ ես,- մտածում էի, երբ նա արագաշարժ մոտեցավ ինձ, աթոռը ավելի հարմարեցրեց նստվածքին, մի առանձին դիրք տալով դեմքին՝ ասաց.

-Ես այդպես էլ սպասում էի պ. Տոնյան, ամեն անգամ, երբ կարդում էի Ձեր թղթակցությունները և հոդվածները, երևակայում էի մի կայտառ, աշխույժ, միշտ ժպտուն, միշտ առաջ, վե՛ր ճախրելիս, միշտ լուսավոր գաղափարներով տարված: Որքա՛ն սիրում եք գրելը: Սակայն, գիտցեք, որ Ձեր թղթակցությունները միշտ սիրով եմ կարդացել: Եվ Նուխին շատերի համար և ինձ համար մասնավորապես, դառել է սիրելի՝ հենց Ձեր թղթակցություններով: Այժմ պատմեք դպրոցից, նրա կյանքից, մեր հետագա անելիքներից: Հայտնում եմ, որ անչափ գոհ եմ և շնորհակալ, որ Հակոբ Խանլարյանին իր ժամանակին պատասխանելուց բացի չեք մոռացել իմ ցանկությունը, այն է՝ լինել Նուխում, դպրոցի տեսուչ: Իսկ այժմ ավելի շնորհակալ կլինեմ, եթե

նախ աջակցեք ինձ, որպեսզի շուտ կարողանամ կազմակերպել մասնավոր իմ կյանքը, գտնել ապրելու մի անկյուն և ապա նվիրվել դայրոցին:

\* \* \*

Այդ գիշեր երկար մնացի «Ֆորերում» և շատ բան իմացա նրա կյանքից, մանավանդ՝ նրա վերջին տարիների կյանքից:

Պարզվեց, որ 1913 թվականին նա անցել է Կ.Պոլիս, զբաղվել է գրական աշխատանքներով և տեսուչ է եղել Բերա կոչված հայկական բաղում:

Պատմեց այն մասին, որ նա զգացել է հայ ինտելիգենցիայի գլխին կախված դամոկլյան սրի ահավոր վտանգը և վերջին թույլենքերին իրան ձգել է Օդեսա մեկնող մի նավ և ազատվել այն կոտորածից, որը կազմակերպել էր Թալեսթ-Էնվեր-Չամալ փաշայի «ազատամիտ» մինիստրական խորհուրդը:

-Իրոք, ճիշտ է, պ. Փափագյան, որ չկան մեր գրական աստղեր՝ Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Կոմիտասը, Գրիգոր Չոփրապը, Գարեգին Խաժակը՝ և հարյուրավոր, հազարավոր հայ առաջավոր ինտելիգենտներ, - հարցրի նրան:

-Իհարկե՝ ճիշտ է: Հարկավոր են դարեր, որպեսզի մենք կարողանանք դնել այդ մարդկանց տեղը նոր հանճարներ: Դրանք, եթե ցանկանային, կազատվեին ճիշտ այնպես, ինչպես ես:

Վերջին թույլենք ես պատահեցի Խաժակին: Ասացի՝ այ տղա, արի՛ Ռուսաստան փախչենք: Իսկ նա պատասխանեց. «Ես ոչ մի տեղ չեմ փախչի այս ահավոր ժամին: Ես կմնամ այնտեղ, որտեղ մեր ժողովուրդն է, թեև վտանգի բերանում»:

-Այդ ինչպե՞ս, պ. Փափագյան, չէ՞ որ Դուք և Խաժակը հակառակորդ էիք իրար: Ես հիշում եմ Ձեր բանակռիվը դեռ «Մշակ» և «Արշալույս» թերթերից: Ո՞նց պատահեց, որ մտերմացաք, - հարցրի ես:

-Այդ ինչպե՞ս լավ հիշում եք: Դիշտ է, մենք հակառակորդներ էինք: Մենք իրար դեմ շատ ենք պայքարել, անգամ չէինք խոսում իրար հետ: Բայց ո՞նց կարելի էր կյանքի վերջին թույլենքում, երբ ահավոր մահն էր սփռվել հայ ժողովրդի գլխին, երբ համատարած մահվան մանգաղը ձեռքին հնձում էր մեր ժողովրդին, մենք էլ իրար դեմ լինեինք... Պայքարը՝ պայքար, բայց մարդը՝ մարդ... Խաժակը հրապարակախոս էր, գրչի ծառա, իսկ ես՝ գրող... Այդ չափտի մոռանալ:

\* \* \*

Այնուհետև մենք խոսեցինք նրա ապրելու, աշխատելու մասին: Նրան պատմեցի այն բոլորը, ինչ հնարավոր է: Բնավ ցույց չտվեցի, որ ինքը հրավիրվել է հակառակ հոգաբարձության, մանավանդ՝ նրա նախագահի: Ընդհակառակը: Մենք ծրագիր կազմեցինք հետևյալ օրը վիզիտով այցելել պ. Գ. Գևորգյանին, մյուս հոգաբարձուներին, վիճակավոր հաջորդին և ծանոթանալ դայրոցի, ուսուցչական կոլեկտիվի հետ:

Պարոն Գերասիմը բնավ ցույց չտվեց, որ ինքը դեմ է եղել Փափագյանին: Ի՛նչպես կարող էր ցույց տալ. քանի որ Փափագյանը չգիտեր նրա վերաբերմունքը, և բացի այդ, առաջին վիզիտը արվել էր հենց նախագահին: Բացի դրանից, Գ. Գևորգյանն անձամբ ծանոթանալով, խոսելով, մտքեր

փոխանակելով Փափազյանի հետ, բոլորովին այլ տպավորություն ստացավ և սկսեց բարյացակամ լինել:

Այդ բարյացակամությունը տևեց 3 տարի, մինչև հոգաբարձության ժամանակը լրանալը:

\* \* \*

Վրթ. Փափազյանը Նուխում տեսուչ մնաց 3 տարի: Օր-օրի վրա նրա և դպրոցի հեղինակությունը բարձրացավ: Գերասիմ Գևորգյանը և բոլոր հոգաբարձուները բարձր գնահատեցին Վրթ. Փափազյանի տարած աշխատանքները: Վրթ. Փափազյանն էլ չափից դուրս կապվեց Նուխում հետ, ժողովրդի հետ: Նա որոշեց իր կյանքի ամբողջ մնացորդը կապել Նուխում հետ: Իր բախտը կապել Նուխում հայության հետ: Սակայն, դեմ եղա ես, որն ոչինչ չէր խնայել, որպեսզի նա հրավիրվի Նուխի: Բայց ինչո՞ւ չցանկացա, որ Փափազյանը 1917-18 ուստարում ևս մնա Նուխում:

Այդ հարցին ես կանդրադառնամ:

\* \* \*

Վրթանես Փափազյանի հետ հաճելի էր ինձ աշխատել: Նա չափից դուրս պահանջող էր, աշխատասեր և պարտաճանաչ: Նա դպրոցի աշխատանքները վերից վար վերակառուցեց: Նա մի գործ անելիս, մի կարծիք հայտնելիս՝ պատեպատ չէր ընկնի: Մտածածը իսկույն կասեր, թեև այդ իր ասածը իրեն տաներ դեպի կործանում: Չէր սիրի բամբասանքներ, ինտրիգներ: Ընդհակառակը, իր պաշտոնավարած 3 տարվա տեսչական շրջանում արձատախիլ արեց բոլոր բամբասանքներն ու բամբասողներին: Նա չկարողացավ տանել Մ.-ի բնավորությունը, նրա բամբասկոտությունը և հետևյալ տարին նրան ազատեց հայոց դպրոցից: Ես շատ ջանք թափեցի, որ նման բան չանի, հաշտվի նրա բնավորության հետ: Բայց նա անդրդվելի մնաց:

-Չեմ կարող տանել մեկին, որ քարացած է գիտելիքների, աշխատանքի մեջ, որ աշխատանքի մեջ ստեղծագործող չէ, որ բամբասող է անատամ պառավ կնոջ պես,- ասում էր նա:

Սակայն, նա բարձր էր գնահատում Սաշային՝ Մ.-ի կնոջը: Նա չէր հանդուրժում որոշ ընկերների պատրաստակամությունը, սակայն, գնահատում էր նրանց աշխատանքը, թափած ջանքերը, տված արդյունքները:

Ինքն ավանդում էր հայոց լեզու՝ բարձր դասարաններում, այսինքն 5-րդ դասարանում: Բայց այս դասարանը չէր կարողանում բավարարել նրան: Եվ մենք որոշեցինք բաց անել 6-րդ դասարան, մի բան, որ իրավունք չունեինք: Բայց ո՞վ էր իրավունքին նայողը: Հարկավոր էր փող, ցանկություն և կադր:

Իսկ այդ բոլորն ունեինք այդ ժամանակ:

Հոգաբարձությունն որոշում ընդունեց, իսկ մենք այդ գործ դարձրինք:

Անգամ չդիմեցինք մարմնավոր և հոգևոր իշխանություններին:

1915-16 ուստարում հավաքեցինք 5-րդն ավարտած մեր սան-սանուհիներին և ունեցանք մի ուժեղ դասարան: Մեր նպատակն էր աննկատելի կերպով դպրոցը մոտեցնել պրոգիմնագիային, սակայն, հայկական պրոգիմնագիային:



\* \* \*

Վրթ. Փափազյանը կարողացավ 3 տարվա մեջ հայերենի վիճակը բարձրացնել: Տարիներ շարունակ հայոց լեզուն ավանդում էին տարբեր մարդիկ, գլխավորապես Միսակ Տեր-Ղազարյանը: Մեր երեխաները ոչինչ չէին անում, քանի որ քարացած մեթոդներով էին դեկավարվում մինչ Փափազյանը:

Մեր աշակերտները ազատ գրել, շարադրել, խոսել, դատել, պատմել չգիտեին: Եվ ահա, Մ.-ի աշակերտներն էին, որ անցան Փափազյանին, որը և առիթ տվեց կարծիք կազմել նախկին հայերենի դասատուների մասին:

Ես խղճում էի Միսակին: Չարմանալի մարդ էր նա: Բոլորից շատ էր աշխատում, տքնում, տանջվում, սակայն, արդյունքը շատ քիչ էր երևում աշակերտների վրա:

Աշխատանքից դուրս նա անցնում էր հոգաբարձուների, ծնողների, կոլեգաների տները և բամբասում նրանց, որոնք հաջողություն էին ունենում աշխատանքի մեջ:

\* \* \*

Վրթ. Փափազյանը ամեն մի դասատուից պահանջում էր «նախածրագրեր», որը շատ նման է այժմյան «պլաններին», առանց որի ոչ մի դասատու դասարան և դպրոց չէր կարող մտնել: Այդ նախագծերը քննվում և հաստատվում էին մանկխորհրդի նիստերում: Այդ նախագծերով էլ նա պահանջում էր, որ ուսուցիչները առաջնորդվեն: Նա պահանջում էր, որ ամեն դասատու լավ ուսումնասիրի դպրոցի հաստատված ծրագրերը, լավ պլանավորի իր աշխատանքները, լավ մշակի դասերը և գործնականում յուրացնի մանկխորհրդի ամեն մի որոշում:

Նա ճառել չէր սիրում: Սիրում էր ամեն ինչ գործնականում ցույց տալ: Եվ նրա պահած դպրոցը 3 տարվա մեջ հասավ իր ծաղկման գագաթնակետին: Չլինե՞ր 1917 թիվը՝ իր կործանարար հետևանքներով, չլինե՞ին 1917 թվի խժոժությունները Նուխու հայ-թուրքական հարաբերությունների մեջ, որը վերջակետ դրեց Նուխու հայ ժողովրդի ծաղկմանը, փթթմանը, ես չգիտեմ, թե ինչպիսի կուլտուրական անկյուն կդառնային Նուխու հայկական թաղամասերը...

Սակայն, այս մասին հետո:

\* \* \*

Վրթ. Փափազյանը ոչ միայն հայոց լեզուն բարձր հիմքերի վրա դրեց, այլև հիմք դրեց ֆիզիկայի կաթինետին, պահանջեց, որ առարկան կապվի գործնականի հետ: Ծիշտ է, տարրական դպրոցի մեր ծրագրերում ֆիզիկա, քիմիա չկար, բայց նա 6-րդ դասարան բաց անելով՝ հիմք էր դրել միջնակարգին: Նա դպրոցը ցանկանում էր դարձնել այն, ինչ չի ցանկացել որևէ մեկը նրանից առաջ:

Նուխեցի Սաշա Շախկալամյանը հատուկ պահարաններ գնեց և փորձերի անոթներ, քիմիայի նյութեր և բնագիտության, մաթեմատիկային վերաբերող ուսումնական պիտույքներ բերել տվեց Թիֆլիսից և նվիրեց դպրոցին:

Փափազյանը չափազանց պահանջկոտ էր նաև մաթեմատիկայի վերաբերյալ: Բնագիտությունը գործնականում նա շատ բարձրացրեց: Դպրո-

ցի արևմտյան մասում հիմնեց մի սքանչելի պարտեզ: Գպրոցի դասարանների պատուհանները բացվում էին դեպի այդ չքնաղ պարտեզը: Ուսուցչանոցի պատշգամբը ևս այդ պարտեզին էր նայում: Գարնան և ամռան ամիսներին կարելի էր նստել այդ պատշգամբում և հիանալ Վրթ. Փափագյանի աշխատանքով, նրա ձևավորած սիրուն ծաղկի մարզերով, անվերջ ու անսահման բացված ծաղիկներով: Ծաղկի սերմերը նա բերել էր տալիս Ռոստովից: Նուխին, որ առանց այն էլ ծաղիկների, վարդերի, հասմիկների մայր հայրենիքն էր, Փափագյանի նախաձեռնությամբ դարձավ ավելի քան բուրաստան, ծաղկաշեն: Քաղաքի ոչ մի այցելու առանց դպրոցի պարտեզն տեսնելու չէր թողնի Նուխին: Գպրոցի պարտեզը դառել էր բուսաբանական այգու մի անկյուն, որ դեպի իրեն էր ձգում բոլորին, բոլորին: Բնագիտության դասատվից պահանջում էր, որ ամեն ինչ գործնականում, ամեն ինչ բնության մեջ սովորեցնի աշակերտներին: Իսկ Միսակը բավականանում էր, որ աշակերտները թութակի պես պատասխանեն դասը: Մրա հակառակը՝ աշակերտ-աշակերտուհիները սիրում էին Նուխվա բնությունը, դպրոցի պարտեզը:

Սիրուն, պատմական էր այդ պարտեզը, սիրուն ու պատմական էին նրա հարյուրավոր ծաղիկները, վարդի բազմատեսակ թփերը, մշտադալար բույսերը, որոնք շուրջ էին տալիս պարտեզին: Սիրուն, պատմական էին պատշգամբի առաջ բուսած հսկա հասմիկները, որոնք ծաղկում, զարդարում և իրենց բուրմունքով լցնում էին դասարանները, ուսուցչանոցը, պատրշգամբը, բակը...

Ո՛չ որ չէր պոկի մի հատիկ ծաղիկ անգամ:

Ծաղիկը, նրա բուրմունքը, բոլորի՞նն էր, բոլորին...

Սիրո՞ւն, պատմական էին ծաղկանոցի հյուսիսային պատի երկայնքով տնկած բալենիները, կեռասենիները, խնձորենին և նռան մեկական ծառերը, որոնք ծաղկում, պտուղներով զարդարում էին պարտեզի հյուսիսը, և ոչ մեկի մտքով չէր անցնի ձեռք դիպցնելու նրա ճյուղ ու տերևին, նրա ծաղկին, պտղին:

Սիրո՞ւն, պատմական էր պարտեզի մեջտեղում ցեմենտի կլոր ավագանը՝ իր մշտնջենական շատրվանով... Քիչ փող չէր պահանջվում այս բոլորի համար, բայց հոգաբարձությունը ոչինչ չէր խնայում այս գեղեցիկ ու սիրուն պարտեզի բարեկարգման համար...

Սիրո՞ւն էին նաև փեթակները, որոնք դրված էին պարտեզի հյուսիսարևելյան անկյունում, և որոնց հետ քիչ չէր զբաղվում մեր մեծանուն գրող և Նուխու տեսուչ Վրթ. Փափագյանը:

Ես անձամբ չէի աշխատում այդ պարտեզում: Այնտեղ աշխատում էին վերջին դասարանի աշակերտ-աշակերտուհիները՝ Փափագյանի ղեկավարությամբ, բայց ես ոչինչ, ոչինչ չէի խնայում, որպեսզի այդ ծաղկանոցը դառնար օր-օրին Նուխվա սիրելին ու պաշտելին: Չէ՞ որ ես հոգաբարձության քարտուղար էի, ամեն ինչ ծրագրողը, ամփոփողը, կարգավորողը...

Ես երբեք չեմ կարող մոռանալ Նուխու մեր դպրոցական շենքը, պարտեզը, բակը...

Բակն ընդարձակ էր և ծաղիկներով զարդարված: Երբ մտնում էիր դարբասով, քեզ դիմավորում էին ճանճուլի հսկա ծառերը և նրանց շարունակությունը, կազմելով երեք շարք լիպայի ծառերը՝ իրենց բուրմունքով, ի-

րենց սիրուն պսակներով...

Քակի հեռու մի կետում մեն ու մենակ արքայի պես բազմել էր մի հսկա թթենի, որի ստվերի տակ դրված էին նստարաններ:

Ինչպիսի՜ հիշողություններ ասես, որ չունեմ այս թթենու տակ դրված նստարաններից:

Քանի՜-քանի՜ անգամներ են այդ նստարանները մեզ նոր կյանքի, նոր արշալույսի հույսեր, հույզեր ներշնչել ու երգել... Քանի՜-քանի՜ լուսնյակ գիշերներ, լուսազարդ աստղերի գիշերային բաղնիք սարքել մեր երիտասարդ զգացմունքների ծով սրտերում...

Նուխվա դայրոցի մենավոր թթենի՛.

Իմ պաշտամունքի հեզ, խոնարհ մտքերի, հույզերի ականատես հսկա թթենի՛:

Ապրո՞ւմ ես արդյոք այժմ, վկայում ու գորովալից մոր պես շարունակո՞ւմ ես արդյոք սիրող սրտերի գաղտնիքները...

Եթե ապրում ես, զգո՞ւմ ես արդյոք, որ քո շուրջը պար բռնած, քո գաղտնապահությանը այնքան ապավինած, քո համբերատար և միշտ քո ստվերի տակ ինձ այնքան հանգստացնող ու կյանք ու արև տվող ընկերները չկա՞ն այլևս ինձ համար...

Հիշո՞ւմ ես, թթենի՛, իմ սիրո՞ւն, իմ չքնաղ թթենի, մեր ջերմ, մե՞ղմ գրույցներն աստղազարդ այն բազում գիշերներին, որոնք հաջորդում էին իրար որպես խենթացած շղթայի պարբերական...

Ասա՛, թթենի՛, ինչո՞ւ ինձ չզգուշացրիր, որ այն վառ, սիրակեզ, հավերժական գիշերները ևս պետք է իրենց մթնշաղն ունենան, իրենց վերջն ունենան...

Թթենի՛.

Իմ հարազատ թթենի՛.

Ո՞ւմ դիմեմ, ո՞ւմ գանգատվեմ...

Ես քո ստվերոտ նստարանն եմ ուզում, քո ստվերում նստած իմ երիտասարդական ցնորքներն եմ ուզում...

Ես քո և իմ սիրած հեզիկ ու հրեշտակ Վարսենիկին [հուշագրի կինն է, ծանոթ. հեղինակներինն է] եմ ուզում... Ես քո այդ տարիների համապարփակ լայն սաղարթը, նրա բազուկներն եմ ուզում, որով այնքան փարված՝ մեզ երջանկություն էիր գուշակում...

Օ՛, դժվար է ապրել անցյալով, անցյալի երիտասարդ երազով...

Ուրեմն՝ գրի՛չ իմ, ինչո՞ւ այդքան ինձ հեռու տարար, ինչո՞ւ ինձ այս աստիճան հեռացրիր այն նյութից, որից սկսել էի...

Մակայն, այս մի մոմենտի վերապրումը անգամ ինձ բավական է, որն զգացնել է տալիս, որ ապրում եմ...

\* \* \*

Թթենուց մի քիչ հեռու կար մի փոքրիկ տարածություն, որը դառել էր իմ սեփական մշակույթի անկյունը:

Նուխում ոչ մի կարիք չկար ունենալ բանջարանոց: Ամեն ինչ էժան էր ու լի: Կանաչու 4 փունջը արժեր մի կոպեկ, պոմիդորի ֆունտը՝ 2 կոպեկ, պղպեղի, կարտոֆիլի, կաղամբի ֆունտը՝ նույնպես կոպեկներ: Պատրջանի, վարունգի 2-3-ը մի կոպեկ, սեխ ու ձմերուկի հատը՝ 1-5 կոպեկ... Մա-

կայն, Փափազյանը ներշնչեց ինձ, որպեսզի հիմք դնեմ մի փոքր բանջարանոցի և մշակեմ այնպիսի բանջարներ, որոնք Նուխում գործածելի չեն: Նա շատ էր խոսում բամիայի մասին: Թե ի՞նչ էր բամիան, մենք չգիտեինք: Ես հեռու չէի պարտեզ, բանջարանոց ունենալու գաղափարից: Դուք երևի հիշում եք<sup>7</sup>, թե ինչպես Ավագ ապոր (Գրիգորյան) քարքարոտ մի փոքրիկ հողամասը սեփական պարտեզ շինեցի և մինչև անգուժ նշանդրեքս, ամուսնական մատանին կորցրի: Ուստի՝ դպրոցի բակի այդ մի շատ փոքր անկյունն էլ ես դարձրի մի փոքրիկ բանջարանոց և ամեն անգամ հրճվում էի, երբ բամիա, պոմիդոր, լոբի, վարունգ էի հավաքում և հիացած՝ տուն տանում...

Որքա՞ն ոգևորվել եմ ես այդ բանջարանոցով, որքա՞ն ցանկացել եմ, որ ե՛ս էլ ունենամ Փափազյանի կամքը, տոկունությունը, սերը դեպի բնությունը, դեպի բուրբը, ծաղիկները, ծառերը...

Գեղեցիկ էր նաև դպրոցի արտաքնոցի տեղը: Այն գտնվում էր բակի հարավ-արևմտյան անկյունում, որի շուրջը տնկված էին խիտ թզենիներ, որոնց լայն տերևները ծածկում էին երկար արտաքնոցի կղմինդրյա տանիքը...

Թզենին պտուղ չէր տալիս, թերևս տալիս էր, բայց դրանց մոտեցող չկար: Թզենին մի գեղեցիկ դեկորացիա էր, նա մի տեսակ քողարկում էր արտաքնոցը, որպեսզի սիրուն բակը չունենա որևէ դիտմանս...

\* \* \*

Թզենի՛, թո՛ւզ...

Ես շատ եմ սիրել թուզ և թզենի, այն էլ՝ Նուխվա՛ թուզ, Նուխվա՛ թզենի...

Այստե՞ղ ևս շեղվեմ և սկսեմ թուզ ու թզենի կարոտել, հիշել...

Է՛հ, չարժե՛:

Բավական է ասել, որ Նուխվա թուզը եղել է ամենօրյա իմ սեղանի զարդ՝ աշնան ոսկե օրերիս:

Թուզը ծախում էին «սաքաթներով» (կողովիկներով) և այն էլ չնչին գներով: Ամեն օր 1-2 սաքաթը բավական էր, որպեսզի ամեն թեյից առաջ լի ու լի թուզ ունենայինք:

Քաղցր, շատ քաղցր էր Նուխվա Կոխմուխ կոչվող գյուղի թուզը, որի կարոտը ահա 29 տարի քաշում եմ ես, հա՛ քաշում...

\* \* \*

Ասացի, որ Փափազյանը սիրում էր մեղու, մեղվանոց: Իսկ Նուխում գովական էր Դաշբուլաղ գյուղի մեղրն ու մեղուն: Ուստի՝ մի նամակ գրեցի Դաշբուլաղ, մեր Ջախարին (հորաքրոջս տղային, որն մեղու և մեղվանոց ուներ Դաշբուլաղում, Աշուղ Տոնո՞ ծննդավայրում): Եվ ահա, Ջախարն էլ երկու փեթակ նվեր ուղարկեց Նուխվա դպրոցին՝ իմ այդ նամակի համաձայն:

Ի՞նչ եղան այդ չքնաղ դպրոցը, բակը, պարտեզը, դպրոցական տնտեսությունը 1917 թվի աշունքից:

Պարզ է:

Ամեն ինչ ավերվել, ասես թե այդտեղ չի ծաղկել և զարգացել հայ ժողովրդի սիրած դպրոցը:

Նորերս ասացին, որ դպրոցը փակման է արժանացել, քանի որ հայ ժո-

ղովրդի մնացորդը, նրա փշրանքը չի ցանկանում իր երեխաներին մայրենի դպրոցն ուղարկել, բոլորը ձգտում են ռուսական դպրոց, բոլորն էլ բռնել են ռուսական քաղաքականություն... Չէ՞ որ էլ չկան հայ դպրոցի, հայ լեզվի, գրականության, երաժշտության նախասնձախնդիր այն գործիչները, որոնք ապրել են մինչև 1917 թվականը...

Յավալի է, բայց իրականությունն է...

Կորչում են Աղվանից աշխարհի հայ ժողովրդի չնչին փշրանքները: Նրանք կուլ են գնում և իրենց տեղը զիջում են թուրքերին, որոնց այսօր աղբբեջանցի ենք անվանում: Նրանք կորչում են, կորչում են վիրահայ մեր հայրենակիցները, անգամ Կովկասյան նախկին մայրաքաղաքում, հայ ժողովրդի կուլտուրական կյանքի նախկին այդ մեծ կենտրոններում, հայկական այդ մեծ օջախում:

\* \* \*

Բայց ես դարձյալ հեռո՞ւ գնացի:

Ես ուզում էի տալ այն շրջապատը, որտեղ կյանք է առել, աճել, մեծացել իմ սիրուն բալիկը, Արմենը:

Եվ ահա, իմ Արմենը 1911 թվականից մինչև 1917 թիվն ապրել է այս շրջապատում, որտեղ բնությունը, գիրը, գրականությունը, կուլտուրան են թագավորել...

Սկի՛ չեմ մոռանում, որ նա իրեն տեսել էր ծաղիկների և ծաղիկ մարդկանցով շրջապատված...

Այդ մարդկանցից մեկն էլ Փափագյանն էր:

Նա նախլեբնիկ<sup>9</sup> էր Մանյա բաջունց տանը, Վալոդյա Մանուկյանի հարուստ կացարանում: Ամսական 40 ռուբլի էր տալիս նա իր ապրելու համար: Ի՛նչ մեծ բան էր իր ստացած 100 ռուբլուց 40 ռուբլին վճարել ապրելուն:

Երկրորդ հարկում էր նրա սենյակը, ննջարանը: Սակայն, նրա տրամադրության տակն էին դահիճը, կահավորված, ընդարձակ ու շքեղ այդ ընդունարանը: Նրա տրամադրության տակ էին հյուսիսային երկար, ընդարձակ պատշգամբը և հարավային, դեպի փողոցը նայող կոկիկ, սքանչելի ֆիգուրներով ձևավորված մի այլ պատշգամբ: Նրա տրամադրության տակ էր մի ընդարձակ պարտեզ-այգի, որտեղ ամեն տեսակ պտուղ, ծաղիկ, թփուկներ, խաղող, անգամ նուռ, թուզ և ամեն ինչ կար: Նրան տալիս էին երկու բլյուդից ճաշ<sup>10</sup>, հարուստ նախաճաշ, ընթրիք, որը մեծ մասամբ ոչխարի խոտոված էր լինում... Էլ չեմ խոսում թխվածքների ու ծով պտուղների մասին:

\* \* \*

Վրթ. Փափագյանը շատ էր սիրում պտուղ, Նուխվա համեղ պտուղներ: Նա գրեթե ամեն օր հրավիրվում էր քաղաքացիների կողմից: Օր չէր անցնում, որ քաղաքում չլինեի «վեչեր» (երեկույթ), անվանակոչություն, մկրտություն կամ հարսանյաց ճոխ, հանդիսավոր սեղաններ, ընթրիքներ:

Եվ ամեն մեկը պարտք էր համարում հրավիրել սիրելի տեսչին, ինչպես և պատվելի ուսուցիչ-ուսուցչուհիներին:

Հիշում եմ, սեղանի ամենաեռման մոմենտին Վրթ. Փափագյանը վեր կկենար, բաժակը կվերցներ, կդիմեր թամաղային ու տան տիրոջը, ներողություն կխնդրեր, որ իր հանգստի ժամն է, որ ժամը 9-ից հետո նա պետք է

տանը լինի և հանգստանա:

Իզուր կլիներ տանտիրոջ կամ սեղանակիցների աղաչանքը: Իզուր կլինեին բոլոր ջանքերը, որպեսզի նրան պահեին գեթ կես ժամ ավելին:

-Ո՛չ, սիրելիներս, ես ձեր հասակին չեմ: Ես արդեն 49 տարեկան եմ, ինձ հարկավոր է կանոնավոր, կայուն ռեժիմ: Ինձ համար ժամանակին քնելը վե՛ր է ամեն տեսակի հարսանիքներից,- ասում էր նա և հրաժեշտ տալիս բոլորին:

\* \* \*

Եվ ամեն անգամ, երբ լսում էի նրա այն հայտարարությունը, որ ինքը «49 տարեկան է», ես խոր, շատ խորը շունչ էի քաշում, որ ես այդ տարիներում ընդամենը 28-29 տարեկան էի՝ երիտասարդ, երիտասարդ կնոջ հետ, 3-4 տարեկան Արմեն բալիկի հետ խնդալիս...

Ես կարծում էի, որ կյանքը ինձ, Վարսենիկիս, բալիկիս պահելու է երիտասարդ, բախտավոր, թարմ: Ես կարծում էի, որ 49 տարին հատուկ է միայն մեծ մարդկանց, գրողներին, երաժիշտներին, դերասաններին, մեր դեկավարներին, որ մենք 49 տարեկան չափտի լինենք...

\* \* \*

Եվ երբ 1935 թվականին ինքս էլ դառա 49 տարեկան, լսեցի Վարսենիկին և Երևանում կազմակերպեցի մի մեծ հրավերք և կատարեցի մեր արծաթյա պսակի հանդեսը: Հարյուրից ավելի հյուրեր ունեի: Երկտակ սեղան էր բացվել Մաքսիմ Գորկու անվան հանդեսների դահլիճում, երաժշտախումբ, խիմոս ու ծիծաղ, կեր ու խում, երգ ու պար, նվերներ, ձոներ, ճաշեր էին, որ հանդես էին գալիս այդ իրիկունը, 1935 թվի դեկտեմբերի 31-ի գիշերը, մի գիշեր ու մի հանդես, որ ամեն օր ինձ հիշեցնում է սեղանիս վրա դրված շքեղ կազմված բլոկնոտը. «Ամենից սիրված ու հարգված Արամ Տոնյանին՝ Հայկազունուց, 1935 թ. դեկտեմբերի 31-ը»:

Ահա այդ գիշերը, միայն այդ գիշերը ես համոզվեցի, որ ես էլ կարող եմ լինել 49 տարեկան, որ ես էլ պետք է հետևեմ Վրթ. Փափագյանին:

Եվ այսօր, երբ գրում և հիշում եմ 28-29 տարեկան հասակիս կյանքն ու շրջապատը, հիշում եմ Վրթ. Փափագյանին և նրա վարած կյանքը, զգում եմ, թե որքա՛ն ազդեցություն է ունեցել այդ մարդը ինձ վրա, մեզ վրա...

Վրթ. Փափագյանը չափազանց սիրում էր մեր ընտանեկան կյանքի դրվածքը: Չափազանց հարգանքով էր ընդունում իմ խորհուրդները, թեև երիտասարդ, բայց չէի գլանում օգտակար խորհուրդներ տալուց: Նա սիրում էր, երբ Վարսենիկը շատ քաղաքավարի, ջերմ հարգանքով կքննադատեր նրա թափթփվածությունը կամ անտակտությունները: Նա ընդունում էր, որ ինքը թափթփված է և բնավ ստեղծված չէ կանանց կաշկանդումներին համբերելուն: Եվ եթե նա թողել է կին, երեխա և ապրում է մենակ, դրա պատճառը հենց այն է, որ. «Իմ կինը շատ էր բծախնդիր, շատ էր պահանջկոտ իմ ամեն մի շարժման, ամեն մի գործում», - պատասխանում էր նման դեպքում:

Սակայն, այդ թափթփված և ամեն ինչ ոտի վրա, շտապ-շտապ կատարող մարդը չէր խուսափում մեզնից, մեր քննադատությունից:

Նա ամեն օր թերևս մի քանի բոպեներով, բայց կլիներ մեզ մոտ: Արմենին կղներ իրեն գոգին, կխոսեր, կխոսեցներ և կհիանար նրա բլբլոցներով, նրա խաղերով: Նա անչափ կսիրեր նրա «Յասա՛-գա՛ս» վտանգավոր խաղը:

Արմենը հենց որ տեսներ Փափազյանին կվազեր, «Յասա՛-գա՛ս» բղավելով մի ակնթարթում կբռներ Վ. Փափազյանի ձեռները և ոտներից կբարձրանար և կկանգներ Փափազյանի պարթև ուսերին և անվերջ կբրբջար...

Գրեթե ամեն օր Արմենը նվեր կստանա այդ դյադյայից<sup>11</sup>, լինի այն՝ ծաղիկ, պտուղ, շոկոլատ, կարկանդակ, թե մի այլ բան:

\* \* \*

Հետևյալ տարին, երբ Վրթ. Փափազյանը իր հերթական արձակուրդներից վերադարձավ, մենք ապրում էինք Ալեքսան Մանուկյանի տանը (այժմ Կոմունիստական փողոցի համար.....<sup>12</sup> տանը, քաղաքային այգու դիմաց): Նրան շատ դուր էր գալիս մեր բնակարանը, մեր կահավորած 6 սենյակը, ընդարձակ պատշգամբը, պարտեզը, հարմարությունները:

-Պարոն Արա՛ն, թույլ տվեք այս մի ամիսն էլ ձեզ մոտ ապրեմ: Ձեր հյուրերին հատկացրած սենյակը, դեպի հյուսիս նայող ընդարձակ պատշգամբը, ձեր մառանի հովասուն ջուրը ասում են ինձ, որ ամառվա գեթ մի ամիսն էլ թողնեմ Մանյա բաջու ստեղծած կոմֆորտը,- ասաց մի անգամ:

Եվ այդ օրվանից նա տեղափոխվեց մեր տուն: Նրան հատկացրի դեպի փողոց նայող մի հրաշալի սենյակ, որ պահում էի եկող-գնացող հյուրերի համար: Ի՞նչ ասես, որ չունեինք: 6 -7 սենյակ ունեինք: Ամեն օր կրակին դնում էինք նուխեցու ալ-ալվան կերակուրներ: Եվ միայն սեփական խմիչք չունեինք: Ասենք մենք էլ խմել չէինք սիրում: Այժմ եմ վայ տալիս գլխիս, թե ինչպե՞ս կարելի էր ամեն ճաշին սեղանին չդնել նուխվա թթի օղին և Ղարաբաղի ընտիր գինին...

-Արա՛ն, արի կվաս պատրաստենք: Ես գիտեմ պատրաստելը:

Եվ մենք պատրաստեցինք 100-ին մոտ շիշ կվաս, բերաններն ամուր փակեցինք և փորն ի վար փռեցինք մեր ընդարձակ, հովասուն մառանում...

Եվ ամեն ճաշին 1-2 շիշ կվաս բաց կանեինք, որոնց զագերից առաջացած պայթյունները ահագին բավականություն էին պատճառում մեզ...

\* \* \*

Վրթ. Փափազյանը սիրում էր ջութակի վրա նվագել և լավ նվագել: Նա նվագում էր նաև պիանինոյի<sup>13</sup> վրա: Նա ձեռք բերեց հայոց դպրոցի համար սեփական պիանինո: Նա չհավանեց երգեցողության դասատու Եղիշե Սարգսի Փարսադանյանին, որը տեղացի էր, երկար ժամանակ դասատու էր և ռեգենտ եկեղեցական խմբին: Նրա փոխարեն հրավիրեց Կարապետ Պապայանին, տարեկան 800 ռ. ռոճիկով, որ քչերին կվճարեին այդ տարիներում: Շատ լավ հիմքերի վրա դրեց երգ-երաժշտությունը, նկարչությունը, ձեռագործը: Նրա օրով սքանչելի էր մեր քառաձայն երգեցիկ խումբը, որը տոն ու կիրակի օրերին երգում էր եկեղեցում և պարբերաբար տալիս էր ճոխ համերգներ: Կ. Պապայանի գործը հետևյալ տարին շարունակեց Վ. Կարթմյանը<sup>14</sup>, որը այժմ ոչ անհայտ կոմպոզիտոր է և Կիրովականի երաժշտական դպրոցի դիրեկտոր: Մի անգամ էլ նրա ռեժիսորությամբ խաղացինք իր «Ժայռ» դրաման:

Սքանչելի ներկայացում էր այդ գիշերը: Բոլորը գոհ հեռացան դահլիճից: Մենք որոշեցինք մի տուրնե կատարել դեպի Կախ և Ջաքաթալա քաղաքը:

Ես, Փափագյանը, Մնացական Թավաքալյանը (հետագայում հայտնի կոմունիստ, Երևանի գավառի ու քաղաքի սովետների գործկոմի առաջին նախագահը, բայց գնդակահարված), Ավետիս Գրիգորյանը (տաղանդավոր սիրող և բեմի սիրահար) մեկնեցինք նախ Կախ, ապա Չաքաթալա:

Ինչպիսի՞ ջերմ ընդունելություններ այդ ավան ու քաղաքում: Ես նկարագրել չեմ կարող: Երանի ես կարողանամ մի առ մի վերարտադրել այն օրերը, ինչ ապրեցինք Կախում և Չաքաթալայում:

Կախում իջանք Վանից նոր գաղթած Արսեն Հացագործյանի, հայոց դպրոցի ավագ ուսուցչի մոտ: Այդ ժամանակ նա երիտասարդ էր, թարմ, երագող բանաստեղծ, գրող, թղթակից, վառվռուն: Պակաս չէր նաև նրա կինը:

Այն ի՞նչ գիշեր էր, երբ մենք իջանք նրա համեստ տանը և մի ամբողջ գիշեր վայելեցինք նրանց հյուրասիրությունը: Ես բնավ չեմ մոռանում այն ջերմ ընդունելությունը, ընթրիքը, մանավանդ փլավը... Այդ Հացագործյանները այսօր էլ կան, ապրում են, ունեն դիրք, անվանի երեխաներ, մասնագետ տղաներ, աղջիկներ: Սակայն, չկան Վրթ. Փափագյանը, Մնացական Թավաքալյանը: Հեռու աքսորում է Ավետիս Գրիգորյանը, այդ տաղանդավոր նուխեցին: Խեղճ ու որբացած վիճակում են ես, որը հիշելով այս մոմենտները, զգում է, որ երբևիցե ապրել է...

Չաքաթալայում մենք իջել էինք Ավետիս Գրիգորյանի քրոջ՝ Նոյեմգարի մոտ, որը ամուսնացած էր մի երիտասարդ մանուֆակտուրիստի հետ: Նա ազուլեցի էր, մի շատ ուրախ ու զվարթ տղա: Նրա անունն էր Սանթրոս Սանթրոսյան:

Մեր այս ճանապարհորդությունը վեր է նկարագրությունից: Մեր այդ օրերի ուրախությունը, բավականությունը, տպավորությունները վեր են որևէ վերապատմելուց...

Սակայն, արոֆեսիոնալ թղթակիցս անկարող էր գրի չառնել այս ճանապարհորդությունը: Եվ ես Բագվա «Արև» օրաթերթի պաղպալային մի շարք համարներում նկարագրեցի այս ճանապարհորդությունը: Այդ հոդվածներն ու թղթակցությունները ես պահում էի հատուկ ալբոմներում: 1905 թվականի առաջին տպագրված հոդվածից սկսած մինչև վերջը ալբոմների կպցրած պահում էի տարիներից ի վեր: Սակայն, 1937 թվին, Արմենի աքսորի հետևանքով, Վարսենիկը առանց ինձ հայտնելու ոչնչացրել էր բոլոր այդ ալբոմները:

Երանի մնային այդ սքանչելի հնությունները, իմ երիտասարդական շրջանի բոլոր թղթակցությունները, հոդվածները, որոնք հսկա հատորներ էին կազմում և Նուխվա ու իմ անձնական կյանքի, մտքի մոմենտներն են վեր հանում...

Ոչ միայն 1905 թվականից մինչև 1917 թվի հոդվածները, այլև 1917-1937 թթ. իմ բոլոր հոդվածներն էլ ոչնչացման է ենթարկվել Վարսենիկի կողմից: Իսկ սովետական կարգերում տպագրված իմ հոդվածները մի քանի անգամ ավելի են եղել, քան նախկին իմ գրածները...

Ափսո՛ս, իմ խնամքով պահած ալբոմները:

\* \* \*

Վրթ. Փափագյանի մասին կարելի է շատ ավելի հիշողություններ գրել, բայց մի՞թե հնարավոր է: Մի՞թե կարելի է շատ բան հիշել այս օրերին, երբ ինքս էլ մոռացել եմ ինձ:



Ափսո՛ւ, որ գրի չեմ առել ժամանակին բոլոր այն անց ու դարձը, նրա գրույցները, նրա կարծիքները, նրա տեսակետները, նրա ծրագրերը, անելիքները...

Ես այն ժամանակ էլ զգում էի, որ մեծ մարդու հետ եմ օր ու գիշեր անում, բայց երիտասարդ էի, չէի զգում, որ հավետ կարող եմ բաժանվել նրանից և ավստասալ, որ լավ չեմ օգտագործել իմ մտերմությունը: Ո՞վ էր կարծում, որ կգա մի օր, երբ ես նրանից կբաժանվեմ և էլ չեմ հանդիպի: Ո՞վ կարող էր երևակայել, որ կգա 1917 թիվը և իր ազատ հովերով կբերի նաև մեր մշտնջենական բաժանումը:

\* \* \*

Երբ վրա հասավ 1917 թվի փետրվարյան հեղափոխությունը, երբ ամեն մեկը իրեն ուզում էր «վայրենի» չճանաչեն և որևէ քաղաքական դավանանքի հարել, Վրթանես Փափազյանը իր շրջապատում իրան հայտարարեց «ռուս սոցիալիստ-հեղափոխական»: Սակայն, նա ոչ մի ակտիվ քայլի չդիմեց, ոչ մի պրոպագանդա, ոչ մի գրչի շարժում չարեց:

Նա 1917 թվի առաջին կիսամյակում, մինչև դայրոցների արձակումը մնաց Նուխում: Միշտ այն համոզումն ուներ, որ նա կմնա, կապրի, կաշխատի և կմահանա Նուխում՝ այնքան էր կապված Նուխու հետ:

Հիշում եմ այն օրերը, երբ նա պետք է գնար Թիֆլիս և օգտագործեր իր արձակուրդն այնտեղ: Հունիսի վերջին օրերն էին:

Նրան խնդրեցի մի պտույտ գործել մեր այգիները, նրան նկարագրեցի Նուխու անվանի Շոկոլովնիկովների հսկա այգին և հսկա տունը:

Նա շատ լավ գիտեր գեներալ Բեհբուժ Շոկոլովնիկովին<sup>15</sup>, նրա ժառանգներին, որոնցից մի քանիսն ապրում էին Ռուսաստանում և ունեին անվանի դիրք, գեներալական աստիճան, լավ ապրուստ...

Շոկոլովնիկով Բորիսն<sup>16</sup> ապրում էր իր կալվածքում, Արեշում, մի հսկա վիլայում, մի հսկա թանգարան-վիլայում: Նա համալսարանական էր, բնագետ: Նա իր կյանքի վերջին տարիները նվիրեց Հայաստանին և 1924 թվականին հիմնեց Երևանի բուսաբանական այգին: Որտե՞ղ է նա, որտեղ են նրանց ժառանգները, ես չգիտեմ, բայց գիտեմ, որ այս օրերիս մի նիժեցի՝ ուտիացի, որ գործով գնացել է Մոսկվա և փողոցում հայերեն խոսելու ժամանակ, նրա առաջն է կտրում մի հսկա զինվորական, գեներալի չինով, հետոսի շքանշաններով կուրծքը զարդարված: Հարցնում է.

-Հայ աղբեր, որտեղացի՞ ես:

-Նիժից եմ, բայց ապրում եմ Երևանում:

-Բա, ի՞նչ գործ ունես Մոսկվայում:

-Եկել եմ ընկեր Շվերնիկի<sup>17</sup> մոտ (կառավարության նախագահության նախագահի մոտ), բայց չեմ կարողանում նրա մոտ ընկնել:

-Չե՞ս կարողանում: Այժմ կընկնես: Արի՛, ինձ հետ:

Եվ այդ Շոկոլովնիկովը, որն ոչ մի բառ հայերեն չգիտի, բայց իր գեմյակ ուղիացուն (Շոկոլովնիկովները մեծ, թե փոքր սոցիալիստներ էին) այդ հայերեն խոսող երևանաբնակ Սարգիս Բաբայանին ոչ միայն տանում, հասցնում է ընկեր Շվերնիկին, այլ օր ու գիշեր օգնում է նրան և «անկարելին» կարելի է դարձնում...

Նա ասել է.

-Մեր արյան մեջ հոսում է նուխեցու մեծ զավակի՝ գեներալ Բեհբուք-բեգ Շուկովնիկյանի արյունը... Ես ամեն ինչ արեցի, հայրենիքին այնպես ծառայեցի, որ դարձա Միութենական հերոս-գեներալներից մեկը<sup>18</sup>... Ճիշտ է, ես հայերեն չգիտեմ և 27 տարի է թողել եմ Անդրկովկասը, բայց հայ ծնվել եմ, հայ էլ կմեռնեմ...

\* \* \*

Հարց.

-Իսկ քո երեխաների արյան մեջ սրսկե՞լ ես Բեհբուք-բեգի և քո հայկական արյունը:

Կասկածում եմ:

Էլի շեղվեցի... Ներեցեք ինձ:

\* \* \*

Ահա այդ Շուկովնիկովների հսկա տունը, այգին և պարտեզը գտնվում էր «Կոմպանիա» կոչված թաղում, որտեղ ապրում էին գյուղացիներ, որոնք պահապանի դեր էին կատարում այդտեղ: Այստեղ երբեմն-երբեմն ամառը գալիս էր Երևանի թեմական դպրոցի ռուսաց լեզվի դասատու.....<sup>19</sup> Շուկովնիկյանը, որը մի շատ բարեկիրք, ինտելիգենտ, շատ գեղեցիկ արտաքինով մարդ էր: Նրա հետ ես ծանոթացել էի 1914, թե 1915 թվի ամռան ամիսներին, երբ ընտանիքով եկել էր Նուխի՝ ամառանոց: Ես եղել էի նրանց տանը և այգում: Ես մտածում էի.

-Ինչո՞ւ այդ հսկա տունն ու այգին ավելի քան չբարեկարգել և դարձնել Նուխվա հասարակության ուշադրության կենտրոնը:

Եվ մի հանդուգն ծրագիր մտահղացավ իմ մեջ: Որևէ հարցի կապակցությամբ ելույթ ունենալ մամուլում:

Դնել Վրթանես Փափազյանի հոբելյանը կատարելու և ապահովելու հարցը:

Եվ Նուխվա հայ հասարակության կողմից գնել Շուկովնիկովների տունն ու այգին և նվիրել Վրթ. Փափազյանին, որն այնքան սիրում է Նուխին, տարված է այգու ու պարտեզի աշխատանքներով...

\* \* \*

Ես նրան ոչինչ չէի պատմել այս իմ մտադրության մասին: Ես ուզում էի սյուրպրիզ անել: Ես ուզում էի գտնել մի պատեհ ժամանակ, մոմենտ, որպեսզի անհաջողության չհանդիպի ծրագիրս:

Առհասարակ, ես բնավորությամբ այսպիսին եմ և այսօր:

Ոչինչ չասել, չխոստանալ, չհայտարարել մտադրությանս մասին, այլ ամեն մի նպատակադրման համար ավելի քան լավ նախապատրաստել և ապա նրա կիրառմանը անցնել:

Ես վստահ էի, որ կարող կլինեմ Շուկովնիկյանների ժառանգներին համոզել, որ նրանք իրենց տունն ու այգին տրամադրեն մի այդպիսի մեծ նպատակի: Վստահ էի, որ նրանք, եթե չծախեն, կնվիրեն մեծ գրողին, իսկ եթե ծախեն, կարող կլինենք Նուխու հասարակության միջոցներով գնել ու նվիրել մեր սիրելի տեսչին, մեր անվանի գրողներից մեկին...

\* \* \*

Ահա այսպես էի ծրագրում մտքում, երբ 1917 թվի հունիսի սկզբներին,

մենք գնացինք Շուկովնիկյանների այգին՝ տեսնելու, թե զբոսնելու...

Շատ հավանեց Փափազյանը այդ տունն ու այգին, նրա դիրքն ու տեղը, նրա ամեն ինչը:

Ես մտքումս հրճվեցի, որ խելացի միտք եմ արել, հրաշալի ծրագիր եմ կազմել:

\* \* \*

Սակայն, ուրբաթն եկավ, քան շաբաթը:

Վրա հասան այնպիսի օրեր, հատկապես 1917 թվի 2-րդ կիսամյակում, երբ ես համոզվեցի, որ Նուխին կորած է հայության համար, որ Նուխվա հայությունը պետք է թողնի Նուխին:

Սակայն, այդ բանը հասկացնել չէր կարելի ոչ ոքի: Ոչ մեկի գլուխը չէր անցնի նման մի միտք: Ոչ ոքի գլուխը չէր գա նման մի միտք:

Սակայն, ես համառ էի իմ կասկածների մեջ:

Ես ամուր էի համոզվել իմ կասկածների մեջ, երբ հուլիս և օգոստոսին վերադարձա մեր գավառի իմ պտույտից, երբ գյուղերն ընկած նոր իշխանություն, սովետներ էին կազմում, երբ ցարական տանուտերների փոխարեն «խորհուրդներ» էին ամեն մի գյուղում...<sup>20</sup>

\* \* \*

Եվ երբ համոզվեցի, որ «Նուխին առանց հայերի» մերկ փաստի առաջ է կանգնած, ես փորձեր արեցի, որպեսզի Նուխի-Արեշ գավառների 54 գյուղերն տեղափոխվի Անդրկովկասի մի այլ ապահով տեղ, երկրորդը՝ կազմակերպել ինքնապաշտպանության գործը, իսկ ոչ մի արդյունքի չհասնելու դեպքում՝ ընտանիքս տեղափոխել մի ապահով բնակավայր, առաջին հերթին Հյուսիսային Կովկաս կամ Դոն:

Ահա այս խորհրդածությունների շփոթ մտքերի մեջ էի, երբ Թիֆլիսում օգոստոսյան մի վատ օր իմ և Վրթանես Փափազյանի մեջ եղավ հետևյալ դիսալոգը.

-Ես մինչ օրս հրավեր չեմ ստացել Նուխու հոգաբարձությունից: Այնինչ, Դուք կարող եք այնպես անել, որ ես շուտ ստանամ հրավերը և մեկնեմ Նուխի:

-Դուք չեք էլ ստանա այդ հրավերը: Ճիշտ այնպես, ինչպես 1914 թ. ես պատճառ եղա Ձեր Նուխի գալուն, այնպես էլ այժմ, ես դեմ եմ, որ 4-րդ տարում նորից գաք Նուխի:

-Ինչո՞ւ:

-Որովհետև Ձեր կյանքը ես բոլորից թանկ եմ գնահատում, որովհետև Նուխվա հայությունը հրաբխի վրա է նստած, և ինքն էլ այդ չի գիտակցում:

-Չեմ հասկանում Ձեզ: Պարզապես Դուք չեք ցանկանում, որ ես շարունակեմ աշխատանքս: Դուք ինչ-որ նպատակ եք հետապնդում: Ես բնավ չեմ ուզում հավատալ, որ Դուք անձնական որևէ նպատակ ունեք, բայց անհասկանալի է Ձեր հանկարծական դիրքը դեպի ինձ:

-Անհասկանալի ոչինչ չկա, պարոն Փափազյան, ես համոզված եմ, որ Նուխին և նրա հայությունը ենթակա են բնաջնջման, որ Նուխվա երգը երգված է: Ահա այսօր էլ ես եղել եմ ՕԶԱԿՈՄ-ում<sup>21</sup> և Նուխու գավառի հայության տեղափոխության հարցն եմ դրել այնտեղ: Ինձ կտրականապես մերժեց Տիգրան Բեգզադյանը: Ինձ ոչ ոք չի հասկանում ո՛չ այնտեղ, Նուխում,

և ո՛չ էլ այստեղ, կենտրոնում: Ես Ձեզ հավատացնում եմ, եթե Նուխին մի հրաշքով սպրեց և իմ ենթադրությունները, կասկածները սխալ եղան, Դուք մի տարի միայն կգրկվեք Նուխուց: Հետևյալ տարին՝ Դուք կգաք Նուխի ոչ թե ծխական դպրոցի ավագ ուսուցիչ, տեսուչ, այլ Նուխի հայկական գիմնազիայի դիրեկտոր:

-Ես չէի սպասի Ձեր այդ վերաբերմունքը...

Ասաց և դժգոհ բաժանվեց ինձնից մեր տաղանդավոր գրողը, իմ հարգած Վրթ. Փափագյանը:

Նրա վերջին խոսքի մեջ կար ատելության, դիակալության շեշտ, նրա ձայնի մեջ կար մի չտեսնված սրտնեղություն, նրա աչքերի մեջ նկատեցի հուզմունք բերող բոցկտոց...

-Այնուամենայնիվ, լավ հետևեք դեպքերին, իրադարձություններին, պարոն Փափագյան: Եթե Նուխվա հայությունը ինձ չլսեց, ինքս էլ կթողնեմ Նուխին, իսկ Ձեզ երբեք, երբեք թույլ չեմ տա գալ նահատակվելու,- այսպես ասացի նրան, երբ նա դժգոհ ինձնից երես թեքեց և ցանկանում էր քայլել, քայց քայլեր անել դժվարանում էր...

Այսպես բաժանվեցինք մենք Թիֆլիսում, օգոստոսյան մի շոգ օր, Վերիյսկայի վայրէջքի մոտ, ցիրկի շենքի առաջ, որտեղ ես եկել էի մասնակցելու Անդրկովկասյան գյուղացիական առաջին համագումարին, որպես ուտիական Նիժ գյուղի համայնքի պատգամավոր:

\* \* \*

Անցան օրեր: Փափագյանը նորընտիր հոգաբարձության կողմից չիրավիրվեց: Ինձ հարկադրեցին թողնել տղայոց գիմնազիան, պետական տարրական դպրոցը և հանձն առնել հայոց դպրոցի տեսչությունը: Թե ինչպե՞ս, ի՞նչ պայմաններում կատարվեց այս բոլորը, ես պատմել և պատմելու եմ այլ գլուխներում<sup>22</sup>: Այստեղ հիշենք, որ ես մի ամիս տարա այդ պաշտոնը... և մի գեղեցիկ օր թողի Նուխին և մեկնեցի Հյուսիսային Կովկաս՝ Արմավիր: Նուխին ինձնից հետո միայն մի ամիս խաղաղ կյանք ունեցավ: Իմ մեկնման հենց երկրորդ ամսին սկսվեց Նուխվա և գավառի հայկական ջարդը: Փակվեց դպրոցը: Լցվեց գաղթականությունը քաղաքը... Սկսվեց սովը, հիվանդությունների համաճարակը և Նուրի փաշայի զորքի սարքած սպանողը... Բնաջնջեցին 50 հայ գյուղեր, վերացավ Նուխու հայ ժողովրդի երբեմնի ուրախ ու երջանիկ կյանքը, սկսվեց մի չտեսնված կոտորած, հալածանք, ջարդարարություն... 54 հայ գյուղերից հիսուն տոկոսով ազատվեցին Նիժը, Վարդաշենը, Ճալեթը և մասամբ Գոյբուլաղը...

Ես այդ ժամանակ գտնվում էի Հյուսիսային Կովկասում, հեռու բոլոր տեսակի քստմանի դեպքերից: Մենք կտրված էինք ողջ Անդրկովկասից:

\* \* \*

Եկավ 1920 թիվը:

Վարսենիկին գաղտնի ճանապարհով ուղարկեցի Բաքու, Թիֆլիս՝ հետազոտելու Հայաստան վերադառնալու պայմանները: Նա տեսավ շատ բարձրադիր և հեղինակավոր մարդկանց: Տեսավ և Վրթ. Փափագյանին: Նա 1920 թ. սկզբներին դեռ Թիֆլիսում է եղել և ռիսկ չի արել գնալ դաշնակցական Հայաստան<sup>23</sup>: Եվ երբ նա հանդիպել է Վարսենիկին շատ է ուրախացել և մի ամբողջ օր բոտանիկական<sup>24</sup> այգում նստած նրանք շատ են խո-

սել, գրուցել, հիշել Նուխին, նրա բարի մարդկանց, նրա բնությունը, նրա ամեն մի բնագավառ, որ ապրեցրել է մեզ...

Վրթ. Փափագյանը շատ երկար է կանգ առել իմ «մարգարեության» մասին և ուղղակի զարմացել է, թե ես ինչ նախագագացում, հոտառություն, մարգարեություն եմ արել Նուխու հայ ժողովրդի համար... Նա չի ուրացել և, նույնիսկ, խոնարհվելու իմ անկեղծության, հեռատեսության, ընկերասիրության և բարեկամության համար:

-Երբ լսեցի, որ ընկ. Արամը գիմնագիան թողել և անցել է իմ պաշտոնին, ես համոզվեցի, որ նա ինձ դեմ լինելով, իր համար է կարիերա ստեղծել, բայց երբ իմացա, որ նա ստիպված է համաձայնություն տվել և մի ամիս հետո թողել է Նուխին,- հիշեցի նրա հետ ունեցած վերջին խոսակցությունս Թիֆլիսում ու ...տարակուսեցի: Բայց, երբ Նուխին հանկարծակի պայթեց և հայ ժողովուրդը ենթարկվեց անսպասելի ավերման, կրակի ճարակի, թրքական յաթաղանին, կոտորածներին, ես միանգամայն ուշքի եկա և մտքումս ասացի. «Ճիշտ էր պարոն Արամը, ճիշտ էին նրա ենթադրությունները, ճիշտ էին նրա հարգանքն ու բարեկամությունը դեպի ինձ»: Ուստի, երբ վերադառնաք Արմավիր, պիտի սեղմեք նրա ձեռքը, կհամբուրեք նրա ազնիվ ճակատը և կասեք, որ ես մեղանչել եմ նրա 1917 թվականին ցույց տված վարքագծի համար:

Այսպես է վերջացրել իր գրույցը 1920 թվի ամռան ամիսներից մեկում, Թիֆլիսի բոտանիկական այգում, երբ երկար գրույց է ունեցել Վարսենիկի հետ:

\* \* \*

Այնուհետև ո՛չ ես և ո՛չ Վարսենիկը չենք տեսել Վրթ. Փափագյանին: Երբ 1920 թվի աշնանը մենք եկանք Երևան, ցավոք սրտի իմացանք, որ այդ օրերին Փափագյանը մահացել է Երևանում՝ գրեթե քաղցից:

Նա Հայաստան գալով նշանակվել է Էջմիածնու հայկական գիմնագիայի դիրեկտոր, ամուսնացել է նուխեցի Մադիլդա Գևորգյանի հետ, ապրել է չարքաշ կյանքով, մեռել է «մածուն» և այլ սնունդ խնդրելով...

Նրա թաղումը ևս եղել է անշուք:

Որտե՞ղ է թաղված նա, չգիտեմ: Եվ ո՛չ որ չգիտի<sup>25</sup>...

Սա խայտառակություն է, ապերախտություն է հանդեպ մի նշանավոր գրողի...

Մենք անչափ ցավեցինք նրա մահով: Անչափ կուզեինք հանդիպել նրան որպես մարդու, գրողի, գործչի...

Այստեղ ստիպված հիշում եմ մի դեպք:

1918 թվին, երբ ողջ Կարսի, Կաղզվանի, Նախիջևանի, Տաճկաստանի ու, մասամբ, Թիֆլիսի հայ ժողովուրդը խուճապի ենթարկված երեսը դարձրել էր դեպի Հյուսիսային Կովկաս, Արմավիրը, նրա գաղթականական կոմիտեն միայն մի գիշեր ստացավ քսան հազար գաղթականներ, որոնք ամեն ինչ կորցրած, խաղաղ ապաստան էին խնդրում Հյուսիսում, առանձնապես հայ գաղութից:

Ես գաղթականական կոմիտեի գործոն անդամ-քարտուղարն էի: Ինչե՛ր չարինք այդ գաղթված ժողովրդի համար: Սակայն, թողնենք այդ: Սա երկար պատմություն է:

Այն պահին, երբ գլուխս կորցրած, մինչ կոկորդա զբաղված էի գաղթականական գործերով, հեռախոսով հայտնեցին, որ Վլադիկավկազի վրայով Արմավիր են եկել մի խումբ մտավորականներ, գրական գործիչներ, որոնց մեջ է նաև Վ. Փափազյանը:

Ես շտապեցի հանդիպելու Վ. Փափազյանին և տանելու իմ կացարանը, ստեղծելու պայմաններ: Սակայն, մեծ եղավ հիասթափությունս, երբ Վրթանեսի փոխարեն ծանոթացրին եղբորը՝ Վահան Փափազյանին և իր տիկնոջը:

-Բայց ո՞ր է Վրթանես Փափազյանը,- գրեթե բղավեցի հուզված:

-Նա Վլադիկավկազից վերադարձավ Թիֆլիս, չցանկացավ գաղթականների ցանկի մեջ մտնել,- հանգիստ պատմեց Վահան Փափազյանը<sup>26</sup>:

-Ափսո՛ս: Նա եթե զար Արմավիր, կունենար աշխատանք, տուն, հարմարություն, խնամք, ամեն ինչ,- պատասխանեցի ես:

Եվ իսկապես:

Ինչպիսի՞ պայմաններ ասես, որ ես հնարավորություն չունեի ստեղծելու նրա համար: Ինչպիսի՞ հարմարություններ ասես, որ չունեի:

Է՛հ, եթե նա Վլադիկավկազից ետ չվերադառնար, եթե նա ուղղակի գար, իջներ մեր տանը, այսօր նա կենդանի կլիներ, «փշուր մը հացի», «պտուկ մը մածնի» կարիք չէր զգա...

Է՛հ, ճակատագիր, է՛հ, ժամանակներ, է՛հ, անտեղի մահեր...

\* \* \*

Շատ ուշ հանդիպեցի նրա սիրած աղջկանը՝ Նունեին: Սա ուսուցչուհի էր Ջերժինսկու անվան դպրոցում: Սրան ես շատ սիրեցի, առաջ քաշեցինք մինչև ռուսաց լեզվի տեսչության պաշտոնը: Սակայն, նա ևս չմնաց մեր ծանոթության ցանցում: Նա ամուսնու կապակցությամբ թողեց Երևանը, գնաց Ստեփանավան: Մենք հաճախ ենք խոսել նրա հորից, բայց նա միշտ ասում էր.

-Հորիցս միայն մի հիշատակ ունեմ: Դ-ա նրա նվիրած իր ոսկե գրիչն է: Ես այլ հիշողություն չունեմ, քանի որ քիչ եմ ապրել հորս հետ:

Եվ այսպիսով, Նունե Վրթանեսի Փափազյանը չկարողացավ իր հոր արժանի ժառանգը լինել...

\* \* \*

Վրթ. Փափազյանին դեռ նոր-նոր են հասկանում: Նրա ընտիր պատմվածքները վերջերս հրատարակեցին, նրա հրաշալի գործերը վերջերս սկսեցին գետեղել դասագրքերում: Նրա «Ժայռ» դրաման միայն վերջին երկու տարում են խաղում և գովերգում, նրա «Հայոց գրականության պատմությունը» կամ սքանչելի «Հայ [բոշանե՞ր]» 1-ին և 2-րդ հատորները դեռ մնում են չհրատարակված<sup>27</sup>, նրա կյանքն ու գործունեությունը, նրա հողաթումբը դեռ մատնված են անուշադրության...

Դեռ նա արժանի իր տեղը չի գտել: Սակայն, կգա մի օր և ուշ չէ այն, որ նա տեղ կգրավի մեր իրականության մեջ...

\* \* \*

Նրա անվան հետ կապված մի դեպք պատահեց ինձ հետ:

1928 թե 29 թվին էր, գուցե և 1930 թիվը:

Գնացել էի Լենինական՝ մի օրով, զբոսանքի:

Գիշեր, այն էլ՝ անձրևային գիշեր էր:

Գիտեի, որ Լենինականի լուսբաժնի վարիչը Սահակ Հայրապետյանն (1892-1943)<sup>28</sup> էր, իմ մտերիմը, իմ նախկին պաշտոնակիցը: Ուղղակի գնացի քաղաքում, լուսբաժնից վերցրի Սահակ Հայրապետյանի տան հասցեն, քայլերս ուղղեցի նրա տունը: Դուռը ծեծեցի, բայց ոչ որ չբացեց:

Հարևանը դուրս եկավ և հայտնեց, որ Հայրապետյանը Թիֆլիս է գնացել:

Ես մնացի շվարած:

-Ի՞նչ անեմ այժմ: Հյուրանոցում տեղ չկա: Ետ գնալ կայարան՝ անհնարին էր այդ հորդ անձրևին: Չգտնե՞մ որևէ ծանոթ, բարեկամ, չանհանգստացնե՞մ որևէ մեկին: Բայց ո՞ր կարելի է գնալ այս գիշերին, այս անձրևին,- ասացի կիսաձայն և ինքս ինձ որոշում արեցի, որպեսզի պատշգամբի մի անկյունում կուչ գալ և մինչ առավոտ ծվարել այնտեղ: Չէ՞ որ ցերեկը ես անշուշտ կգտնեի բազմաթիվ ծանոթներ, բարեկամներ:

Այս մտքերի մեջ էի, երբ դուռը բացվեց և մի ծեր կին ջուր թափեց բակը ու ինձ տեսնելով կասկածեց ու հարցրեց.

-Ո՞վ եք:

Ես պատասխանեցի, որ մի օտարական հայ եմ և ուզում եմ պաշտպանվել անձրևից, որովհետև ծանոթս՝ Հայրապետյանը, Թիֆլիսում է և այլ հասցե չունեմ ձեռքիս:

Մեր խոսակցության ձայնը հասնելով ներս, լսեցի մի կիրթ, առնական ձայն.

-Դա ո՞վ է մայրիկ, թող ներս գա, համեցե՛ք արա:

\* \* \*

Ես ներս մտա: Մի սոլիդ, ինտելիգենտ, ոչ այնքան երիտասարդ տղամարդ էր նստած սեղանի առաջ և օրվա թերթերն էր նայում:

Մենք ծանոթացանք: Երբ իմացավ իմ վիճակը ասաց.

-Սիւնույնն է, սա ևս հայի տուն է: Գիշերեցեք մեզ մոտ, կլինենք բարեկամներ:

Այնուհետև առաջարկեցին թեյ, ընթրիք, իսկ ես հափշտակվել էի զրույցով և զարմացել էի, թե այս ի՞նչ հրաշքով ես տուն ընկա:

Գիշերը անչափ լավ քնեցի: Առավոտյան ինձ առաջարկեցին լվացվել մյուս սենյակում: Լվացվելիս աչքովս ընկավ լվացարանի գլխին կախած մի խմբանկար, որի մեջ Վրթանես Փափազյանի հաղթ իրանը, արծվային քիթն ու ողորկ սանրված մազերը սթափեցրեցին.

-Սա պարոն Փափազյանն է,- բացականչեցի ես:

-Այո, գրող Փափազյանն է, իմ քեռին,- արձագանքեց մյուս սենյակից ընկ. ....<sup>29</sup>

-Այո՛, այո՛, իմ եղբայրը, Վրթանեսը,- վրա բերեց մայրը:

Ես քար կտրեցի: Այսպիսի է՞լ զուգադիպությո՞ւն:

Տարիներ առաջ ես եմ տեղ, սենյակ, ույուտ տվել Վրթ. Փափազյանին՝ Աղվանից աշխարհում, Նուխում, այսօր նրա քույրն է ինձ օթևան տվել համեստ հարկի տակ:

Եվ ես շտապ-շտապ լվացվեցի, նստեցի թեյի սեղանին, մեծ ախորժա-

կով վայելեցի նրանց հյուրասիրությունը: Երկա՛ր-երկա՛ր պատմեցի Փափազյանից, նրա և իմ հանդիպումներից, հուշերից:

-Ուրեմն, այդ դո՞ւք եք, մայրի՛կ, որ Ձեր ընտանիքը Վանից Անդրկովկաս գալով, առաջին կինն եք եղել, որ Ձեր քահանա հոր պահանջով, բե՛մ եք բարձրացել Անդրկովկասում,- հարցրեցի ես:

-Այո՛, այդ ես եմ եղել, բայց որտեղից գիտեք այդ,- քնքշանքով վրա բերեց մայրիկը:

-Այդ մասին շատ եմ կարդացել և, վերջապես լսել եմ հանգուցյալ Վրթ. Փափազյանից: Ես Ձեր մյուս եղբոր հետ էլ եմ ծանոթ՝ Հյուսիսային Կովկասից: Նա և իր կինը գաղթել էին Արմավիր, ապա գնացել էին Ժելեզնովոդսկ՝ հանքային ջրեր, 1918 թվին: Եվ ես նրա հետ վայելել եմ մի քանի օրվա անհիշաչար ժամեր...

Սակայն, թողնե՛նք այդ ժամերը...

\* \* \*

Անցել եմ այս օրերից գրեթե 32 տարի:

Ո՞ր 1914 թիվը, ո՞ր 1946 թիվը:

Բայց ես ուզում եմ վեր հանել բալիկիս մանկական օրերը, չեմ կարող հիշել 1914, 15, 16, 17 թվերի մեր ընտանիքի այն գեղեցիկ օրերը, այն բարեկամներին ու մարդկանց, որոնց հետ եմ իմ կյանքի հաջողությունները, ուրախությունները և զարկ տվել բալիկիս մանուկ կյանքի զարգացմանը...

Սակայն, կյանքիս այդ ահավոր ժամին, երբ մի շաբաթից հետո լրանում է իմ վաթսուն տարին, երբ աշխատանքից ծանրաբեռնվածության հետ միասին զգում եմ ընտանեկան կյանքի մեծ անկում, երբ համեմատում եմ իմ շրջապատը և համեմատում Նուխվա իմ շրջապատը, որի մեջ մեծ դրոշմ է թողել Վրթ. Փափազյանը, հարց է ծագում իմ մեջ.

-Ինչո՞ւ խորը կերպով չուսումնասիրեցի մեր առաջնակարգ այդ գրողին, նրա ստեղծագործությունները, ինչո՞ւ անալիզի չենթարկեցի նրա կատարած և օրվա գծած ուղիները, ինչո՞ւ խորը կերպով չճանաչեցի նրա հոգին, աշխարհայացքը, քաղաքական դավանանքը, ինչո՞ւ իր օգնությամբ չպարզեցի այն պատճառները, որոնք պատճառ դարձան նրան թերագնահատելուն:

-Ինչո՞ւ, ինչո՞ւ Լեոյի, Ալ. Շիրվանզադեի և ուրիշների փառավոր հոբելյանները կատարվեցին, ապահովվեցին, միջոց և հնարավորություն տվին շարունակելու գրական աշխատանքները:

-Ինչո՞ւ, ինչո՞ւ ցարական ռեժիմի օրերին մեր մի շարք առաջնակարգ գրողներ. Նար-Դոս, Մուրացան, Պոռոջյան և այլն, որոնք նվազ մեծարանքի և ուշադրության առնելուց հետո, սովետական կարգերում նրանք խոր կերպով գնահատվեցին և լայն ժողովրդականություն վայելեցին և դեռ կվայելեն ավելի քան մեծ ուշադրություն, իսկ Վրթ. Փափազյանը...

Չարմանալի՛ բան:

Վրթ. Փափազյանը չգնահատվեց, վեր չհանվեց ցարիզմի օրերում:

Նրան չէր սիրում ո՛չ ազատամիտ, և ո՛չ պահպանողական բանակը հանձինս «Մշակի», «Նոր դարի», «Հովտի», «Լուսնայի», «Մուրճի» և այլն:

Նրան վեր չհանեց 1905 թ. «Վիտեի» ազատության ռեֆորմներից մինչև 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունը: Ոչ մի թերթ, լինի նա լիբերալ-



կադետական, հնչակյան, դաշնակցական, թե սոցիալիստական, ոչ մի անգամ չարժարծեց Վրթ. Փափազյանին, չղբեց նրան ապահովելու, հոբելյանի և մասսայականացման հարցերը:

Դաշնակցական կառավարության ժամանակ, երբ Լևոն Շանթն ու Ավետիք Ահարոնյանն ընտրվեցին պառլամենտի անդամ, նախագահ և կարևոր հանձնաժողովներ ղեկավարելու, Վրթ. Փափազյանը քաղցած մահվան դատապարտվեց Էջմիածնի միջնակարգ դպրոցի պատերի տակ:

Սովետական կարգերում, երբ բոլոր գրողները արժանացան խոր գնահատման, ուշադրության, երբ նրանց ստեղծագործությունները քանիցս վերահրատարակվեցին և դառան հայ ժողովրդի սիրո, գուրգուրանքի առարկա, Վրթ. Փափազյանը մնաց սովերի տակ, նրա ստեղծագործությունը չմասսայականացվեց, ինչպես Նար-Դոսի, Մուրացանի, Պռոշյանի, Աղայանի և ուրիշների երկասիրությունները:

Ծիշտ է Վրթ. Փափազյանի «Ընտիր երկերը» հրատարակվել են, մեկ, թե երկու անգամ, բայց չենք գտնի մի լուրջ ուսումնասիրություն, մի փորձ, որով հանդես բերեն Վրթ. Փափազյանին և նրան դնեն Մուրացանի, Նար-Դոսի, Պռոշյանի, Աղայանի կողքին:

Բավական է ասել, որ նրա գերեզմանը դեռ անհայտ է հայ ժողովրդի համար: Բավական է ասել, որ գրողների միությունը, նրա օրգան «Գրական թերթը» և «Սովետական գրականություն և արվեստ» ամսագիրը մինչ օրս չեն տվել Վրթ. Փափազյանի մասին որևէ դասախոսություն, ռեֆերատ, ուսումնասիրություն, բավական է ասել, որ մինչ օրս չի նշվել նրա ծննդյան, գործունեության և մահվան մասին որևէ նշում, հիշատակություն: Բավական է ասել, որ մատաղ սերունդը, երիտասարդությունը և մեր մասսան աղոտ գաղափար ունեն Վրթ. Փափազյանի մասին:

Սակայն, այդպե՞ս պետք է լինի:

-Ո՛չ,- կասեմ ես,- հազար անգամ ո՛չ:

-Վրթ. Փափազյանը որպես գրող շատ բարձր է կանգնած շատերից, որոնց մասին հաճախ խոսվում է մեր մամուլում և մեր առօրյա կյանքում:

Ի՞նչ հանցանքով է, որ նա վրիպել է մեր ուշադրությունից:

Ես չեմ կարող դրան պատասխանել: Սակայն, պիտի բարձր ձայնով գոռամ և հայտարարեմ, որ ժամանակն է գնահատելու Վրթ. Փափազյանին:

Եթե նրան համարում են «նախկին մարդ», եթե նրան դնում են բուրժուանացիոնալիստական հոսանքների մարդ, եթե կարծում են, թե նա տուրք է տվել դաշնակցությանը և թերևս դաշնակցական է եղել, ապա ես պետք է գոռալով վկայեմ, որ նա հեռու է եղել դաշնակցականներից, հնչակյաններից և բոլոր քաղաքական հոսանքներից, ես պետք է վկայեմ, որ նա Հոկտեմբերյան ռևոլյուցիայի օրերին ոչ մի նշան չարեց, որ ինքը կարող է հարել հայկական կյանքում հող գտած որևէ պարտիայի: Այդ շրջանում նա հաճախ էր խոսում «հող և ազատություն», «մուրճ և մանգաղի» մասին, շարունակ հիշատակում էր Ռուսաստանի ազատության և նրա քաջամարտիկ հեղափոխական մեծ գրող Մաքսիմ Գորկու անունը:

Չիներ նրա մահը, նա կհետևեր Մաքսիմ Գորկուն ու կզնար նրա հետքերով:

Նա, որ տվել է «Վիշապ», «Լալո», «Ըմբոստի մահը», «Լուր-դա-լուր» և բազմաթիվ մման ստեղծագործություն, վկայում են, որ նա իր խիզախ գրիչը հանդես կրեեր սովետական կարգերում և կտար ավելի քան մեծ երկեր:

Նա կուսակցական, հեղափոխական չէր, բայց հավատում էր հեղափոխությանը, նա սպասում էր հեղափոխությանը, նա հենց այդ գաղափարն է մասսայականացրել իր անձնական «Վիշապում», որը ձեռքից ձեռք էին խլում, երբ աշակերտ էինք:

Է՛հ, ես ուզում եմ հավատալ, որ եթե չլինեք նրա մահը, նա կլինեք Մաքսիմ Գորկու բանակում, նրա կողքին, կոմպարտիայի շարքերում...

Եւ այսքանից հետո Վրթ. Փափազյանը մնացել է ստվերի մեջ...

Թվում է, որ կգա ժամանակ, երբ մեր գրողների միությունը, պարտիան և հասարակությունը վեր կհանի Վրթ. Փափազյանին և նրան կդնի իր արժանավոր դիրքում...

Ես կուզենայի ամեն ինչից կտրվել և ուսումնասիրել այս մարդուն, այս գրողին, բայց կարո՞ղ եմ:

-Ո՛չ:

Այս հիշողություններն էլ գրում եմ շտապ, գրեթե ոտքի վրա, մակերեսային խորությամբ և ինքս էլ դժգոհ եմ, որ Վրթանես Փափազյանին հատկացնում եմ այս ճղճիմ, անողնաշար, թռուցիկ, ոչինչ չասող հիշողությունները...

Սակայն, լավ է այսքանը, քան ոչինչ չասելը:

Երբ որոշել եմ տալ իմ երեխաներին ու թոռնիկներին իմ կյանքի գլխավոր էջերը, «Նոթերը», չէի կարող լուռ անցնել 1914-17 թվերի իմ ընտանիքի մոտիկ բարեկամի, Վրթանես Փափազյանի կողքով:

Այն, ինչ չկարողացա ես անել, թող ինձնից ձեռնհասներն անեն...

Թող այդ օրը շուտ վրա հասնի:

Թող այս իմ էջերը մնան իմ ընտանեկան կյանքի թերթիկներում...

Թող մեր մասսան, մեր ժողովուրդը ճանաչի տաղանդավոր գրողին, մոռացված Վրթանես Փափազյանին:

**А. А. ХУДАВЕРДЯН, Г. А. МАДОЯН — Воспоминания педагога Арама Тоняна о Вртанесе Папазяне.** — Публикуемые воспоминания проливают свет на малоизвестный период деятельности классика армянской литературы, а именно — в годы первой мировой войны.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> Արմեն Տոնյան - հուշագրի որդին. 1937-ին դարձել է ստալինյան կամայականությունների զոհ:

<sup>2</sup> Արմեն Տոնյանի զավակը:

<sup>3</sup> Մենք արդեն նկատել ենք այն հանգամանքը, որ ներկայացվող նյութերն ընդարձակ հուշապատման մի մասն են միայն: Մեծը՝ ընդգրկունը, հավանաբար, ավելի անձնական բնույթ ուներ և ուղղված էր ընտանիքի անդամներին:

<sup>4</sup> Հակոբ Խանլարյան (1885-1966), բանաստեղծ:

<sup>5</sup> Սարգիս Տեր-Անանյան (1877-1937), իմբրագիր, կուսակցական, պետական գործիչ: Մյուսների ինքնությունը չհաջողվեց պարզել:

<sup>6</sup> Գարեգին Խաժակ (1867-1915) - նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ (նրա մասին տե՛ս **Ա. Հարությունյան**, Գարեգին Խաժակ. «Նշանավոր ճեմարանականներ», պրակ Բ, Ս. Էջմիածին, 2009, էջ 141-146):

<sup>7</sup> Նկատի ունի իր ժառանգներին՝ ապագա ընթերցողներին:

<sup>8</sup> Աշուղ Տոնի (Դոնի), Դ-անիել Սարգսյան (1740-1845), տե՛ս «Հայ աշուղներ», կազմեց Հասմիկ Սահակյան, Եր., 1961, էջ 425, նաև՝ «Ով ով է. Հայեր. կենսագրական հանրագիտարան», հատ. 1, Եր., 2005, էջ 329:

<sup>9</sup> Սեդանորդ (ռու.):

<sup>10</sup> Մատուցվում էր երկու ճաշատեսակ:

<sup>11</sup> Հորեղբայր (ռու.):

<sup>12</sup> Տեղ է թողել հետագայում լրացնելու համար:

<sup>13</sup> Դաշնամուր:

<sup>14</sup> Կոմպոզիտոր Էդուարդ Կզարթնյան (1895-1976):

<sup>15</sup> Շելկովնիկով Բեհբուտ Մարտիրոսի (1837-1878):

<sup>16</sup> Հեղինակը շփոթել է անունները. խոսքը Շելկովնիկով (Մետաքսյան) Ալեքսանդր Բորիսի (1870-1933) բնագետի մասին է: 1922 թ. հիմնել է բնապատմական, 1925-ին գյուղատնտեսական թանգարաններ:

<sup>17</sup> Ն. Մ. Շվերնիկ (1888-1970), 1946-53 թթ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ:

<sup>18</sup> Չհաջողվեց պարզել հերոս գեներալի ինքնությունը:

<sup>19</sup> Բաց է թողել հետագայում լրացնելու:

<sup>20</sup> Բնագրում այսպես է:

<sup>21</sup> ОЗАКОМ-Особый Закавказский Комитет. Ստեղծվել է 09(22).03.1917թ. Ժամանակավոր կառավարության կողմից, կազմված է եղել Պետ. Դումայի 5 անդամներից:

<sup>22</sup> Խոսքը հեղինակի «Նոթերի» մասին է, որ, ինչպես ինքն է ասում, գրել է իր ժառանգների համար:

<sup>23</sup> Հեղինակը սխալվում է. Փափագյանը այդ տարիներին աշխատել է Վաղարշապատում:

<sup>24</sup> Բուսաբանական այգում:

<sup>25</sup> Վրթ. Փափագյանը թաղված է Կոմիտասի անվան այգում (տե՛ս մեր առաջաբանի 1-ին հղումը):

<sup>26</sup> Վրթ. Փափագյանի մյուս եղբայրն է Ներսես Փափագյանը, եղեռնի զոհ դարձավ 1915-ին Կոստանդնուպոլսում (տե՛ս «Վավերագրեր...», էջ 319):

<sup>27</sup> Աշխատության համառոտ շարադրանքը լույս է տեսել 1900 թ. «Этнографическое обозрение» հանդեսում (№ 2):

<sup>28</sup> 1931-1933 թթ. եղել է ԵՊՀ ռեկտոր (այն ժամանակ՝ մանկավարժական ինստիտուտ, տե՛ս «Մեր անվանի դասախոսները», առաջին գիրք, Եր., 1970, էջ 132):

<sup>29</sup> Տեղ է թողնված հետագայում լրացնելու համար: Դ-ա Արտաշես Կարինյանի եղբայրը՝ Ռուբեն Գաբրիելյանն է (1888, Բաքու, 1968, Երևան), պետհամալսարանի դասախոս, բնագետ, մանկավարժ: Երկեր. «Վենետիկի Մխիթարյանները և դարվինիզմը» (Եր., 1948), «Ակնարկներ դարվինիզմի և բիոլոգիական մտքի պատմության հայ իրականության մեջ, 19-20-րդ դդ.» (Եր., 1963), «Մ. Նալբանդյանը և բնագիտությունը» (Եր., 1966):